ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2005 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2006

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1 **Իրականացված քաղաքականության հիմնական ուղղությունները……** 4

1.1. Գործունեության հիմնական ամփոփ արդյունքները…….

2 **2005թ. կատարված հիմնական աշխատանքները…….** 4

2.1. Օրենսդրական ոլորտ և զարգացման ծրագրերի մշակում……..…… 4

2.2. Առևտրի ոլորտ…… 7

2.3. Ներդրումային ոլորտ……. 8

2.4. Տնտեսական մրցակցության պաշտպանության քաղաքականության ոլորտ. 10

2.5. Գիտական և տեխնոլոգիական զարգացման ոլորտ…….. 10

2.6. Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտ……. 12

2.7. Արդյունաբերական ոլորտ……. 14

2.8. Ռազմարդյունաբերական համալիրի և ռազմատնտեսական ծրագրերի ոլորտ .....……... 17

2.9. Արտաքին տնտեսական քաղաքականության և արտաքին տնտեսական համագործակցության ոլորտ……... 18

2.10. ԱՀԿ և ԵՄ հետ համագործակցություն…….. 20

2.11. Փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտ…….. 21

2.12. Զբոսաշրջության ոլորտ……... 23

2.13. Մտավոր սեփականության պահպանության ոլորտ……. 24

2.14. Ստանդարտացման, չափագիտության և համապատասխանության հավաստման ոլորտ…….……..... 27

2.15. Որակի վերահսկողություն…….. 29

2.16. Տնտեսության մեջ աշխատանքների անվտանգ կազմակերպման հսկողություն…… 30

2.17. Ընդերքօգտագործման ոլորտ..... 31

Հավելված 1. Համառոտ տվյալներ ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության համակարգի 2005թ. ֆինանսատնտեսական գործունեության մասին…… 33

Հավելված 2. Նախարարության փաստաթղթաշրջանառությունը……..…… 34

Հավելված 3. Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարության 2006 թվականի միջոցառումների ցանկ……..……. 35

1. Իրականացված քաղաքականության հիմնական ուղղությունները

2005 թվականին ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության գործունեության համար հիմք են հանդիսացել ՀՀ նախագահի հրամանագրերը, ՀՀ կառավարության և ՀՀ վարչապետի որոշումները, ՀՀ կառավարության գործունեության ծրագիրը և դրա իրագործումն ապահովող միջոցառումները, ՀՀ 2005 թվականի պետական բյուջեի՝ ՀՀ կառավարության ուղերձի հիմնադրույթները:

Նախարարության գործունեությունը հիմնականում ուղղված է եղել հետևյալ նպատակների իրականացմանը.

- տնտեսության կայուն զարգացման հենքերի ապահովմանը, ազատական տնտեսական քաղաքականության շրջանակներում մրցակցային միջավայրի բարելավման ապահովմանը, ներդրումային ակտիվության աճին հետևողական աջակցությանը,
- օրենսդրական դաշտի ներդաշնակեցմանը՝ գործարարության պայմանների հստակեցման ու խոչընդոտների վերացման նպատակով, միջազգային նորմերին մերձեցմանն ու համապատասխանեցմանը,
- Հայաստանի, որպես տնտեսական գործընկեր, վարկանիշի բարձրացմանն ու առավելագույն ինտեգրմանը համաշխարհային տնտեսության մեջ,
- ներմուծման նկատմամբ արտահանման առաջանցիկ աճի ապահովմանը՝ արտահանման կառուցվածքում հատկապես գիտատար արտադրանքի մասնաբաժնի ավելացմամբ,
- տնտեսության մեջ ինովացիոն գործընթացների աշխուժացմանը, ազգային ինովացիոն համակարգի ձևավորմանն ու զարգացմանը, գիտության և տնտեսության իրական հատվածի միջև կապերի սերտացմանը,
- փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության համակարգի շարունակական կատարելագործմանը,
- տնտեսության մեջ տեխնիկական անվտանգության նոր, ժամանակակից համակարգի օրենսդրական հենքի ստեղծմանը,
- մտավոր սեփականության, հեղինակային և հարակից իրավունքների պահպանության համակարգի հետագա կատարելագործման ապահովմանը,
- տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացման համար նպաստավոր պայմանների ապահովմանը,
- զբոսաշրջության զարգացման համալիր միջոցառումների իրականացմանը,
- տարածքային ներդաշնակ տնտեսական զարգացման նպատակով հասցեական գործողությունների ձեռնարկմանը:

1.1. Գործունեության հիմնական ամփոփ արդյունքները

2005թ. իրականացված քաղաքականության արդյունքում.

- Ըստ նախարարության գնահատականի կարճանագրվի համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) 13.9% աճ, արդյունաբերությունում՝ 7% աճ:
- Հայաստանը, համաձայն տնտեսության ազատականության միջազգային վարկանիշային գնահատականի, 161 երկրների շարքում զբաղեցրել է 27-րդ տեղը[1]:
- Օտարերկրյա ներդրումների ծավալը սպասվում է 350-380 մլն դոլար: 2004թ. 9 ամիսների համեմատությամբ 2005թ. նույն ժամանակահատվածում օտարերկրյա ներդրումների ծավալն աճել է 28.7%-ով:
- Արտաքին առևտրաշրջանառության ծավալը նախնական տվյալներով կազմել է 2790.7 մլն դոլար, աճի տեմպը՝ 135.1%: Ընդ որում՝ արտահանման ծավալը կազմել է 970.3 մլն դոլար, աճի տեմպը՝ 135.7 %, ներմուծումը՝ 1820.4 մլն դոլար, աճի տեմպը՝ 134.7%:
- Տեղեկատվական տեխնոլոգիաների մասնաբաժինը ՀՆԱ-ում կազմել է 1,7 %:
- ՓՄՁ ոլորտի մասնակցությունը ՀՆԱ-ում կազմել է շուրջ 40%, ՓՄՁ զարգացման ինդեքսը[2] նախնական տվյալներով կազմել է 147.8՝ 2004թ. - 117.8, 2003թ. - 82.0 դիմաց:
- Հայաստան այցելած զբոսաշրջիկների թիվը գնահատվում է 300 հազարից ավելի:

2. 2005թ. կատարված հիմնական աշխատանքները

2.1. Օրենսդրական ոլորտ և զարգացման ծրագրերի մշակում

<u>Օրենսդրական ոլորտ</u>

ՀՀ Ազգային ժողովն ընդունել է նախարարության կողմից մշակված հետևյալ օրենքները՝

- «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին»,
- «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»,

---

[1] «Ուոլ Սթրիթ Ջորնըլի» և «Հերիթիջ հիմնադրամի» կողմից 2006թ.-ի ոսումնասիրության (իրականացվում է ամենամյա և անկախ փորձագետների կողմից) արդյունքում Հայաստանը Տնտեսական Ազատության Ցուցանիշով դասակարգվել է որպես «մեծամասամբ ազատ»՝ զբաղեցնելով 27-րդ տեղը, 2005թ.-ի 42-րդ տեղի փոխարեն: 2006թ.-ի ցուցանիշի բարելավումը պայմանավորված է հետևյալով. «օտարերկրյա ներդրումները» գնահատվել է 1.0 (նախկին 2.0 փոխարեն), որը հնարավոր լավագույն գնահատականն է: Բարելավվել են նաև. «աշխատավարձեր ու գները»՝ 1.0-ով, «ստվերային տնտեսություն»՝ 0.5-ով, «կառավարության միջամտություն»՝ 0.5-ով, «հարկային բեռ»՝ 0.2-ով:

[2] Ինդեքսը կիրառվում է ՄԱԿ-ի կողմից իրականացվող հետազոտություններում: Այն ընդհանրական տնտեսական ցուցանիշ է՝ հիմնված հետևյալ 3 հիմնական գործոնների վրա. մասնավոր հատվածի տեսակարար կշիռը երկրի տնտեսությունում, ՓՄՁ սուբյեկտների տեսակարար կշիռը ՀՆԱ-ի մեջ, ՓՄՁ սուբյեկտներում ներգրավված աշխատուժի տեսակարար կշիռը զբաղվածների ընդհանուր թվաքանակում:

- «Լիցենզավորման մասին» և «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքներում փոփոխություններ կատարելու մասին,
- «Առևտրաարդյուբերական պալատների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին»
- «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին»
- «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին»,
- «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին»

ՀՀ կառավարության կողմից հավանություն են ստացել և ՀՀ Ազգային ժողով են ներկայացվել հետևյալ օրենքների նախագծերը՝

- «Ինովացիոն գործունեության պետական աջակցության մասին»,
- «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքը՝ համապատասխան իրավական ակտերի փաթեթով:

Մշակվել և սահմանված կարգով շրջանառության մեջ է դրվել

- «Ներդրումների մասին» ՀՀ օրենքի նախագիծը
- «Արհեստագործության մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

ՀՀ կառավարության 2005թ. գործունեության ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների ցանկով նախարարությանը վերապահված 28 միջոցառումներն իրականացվել են սահմանված ժամկետներում:

2005թ. ընթացքում մշակվել և ՀՀ կառավարություն են ներկայացվել վերը նշված օրենքների կիրարկման ապահովմանն ուղղված որոշումների և այլ իրավական ակտերի նախագծեր: Մասնավորապես ՀՀ կառավարություն է ներկայացվել ՀՀ կառավարության որոշման 90 և ՀՀ վարչապետի որոշման 46 նախագծեր:

<u>Ծրագրերի մշակում</u>

Երկրի երկարաժամկետ զարգացման ռազմավարությունն ամրագրելու նպատակով 2005թ. նախարարությունը մշակել և ՀՀ կառավարություն է ներկայացրել հետևյալ ծրագրային փաստաթղթերը՝

- ՀՀ-ում ինովացիոն գործունեության հայեցակարգը,
- ՀՀ ներդրումային քաղաքականության հայեցակարգը,
- Մտավոր սեփականության բնագավառում պետակավ կարգավորման հայեցակարգը,
- ՀՀ-ում արհեստագործության զարգացման հայեցակարգը,

- «Հայաստանի Հանրապետությունում ինովացիոն համակարգի ձևավորման և զարգացման 2005-2010 թվականների ծրագիրը»,
- Փոքր և միջին ձեռնարկատիրությանը պետական աջակցության 2006 թվականի ծրագիրը,
- «Ծաղկաձորը՝ միջազգային չափանիշներին համապատասխանող զբոսաշրջության կենտրոն» նպատակային խնդիրների լուծման ծրագիրը,
- 2006 թվականի զբոսաշրջության զարգացման ծրագիրը:

Շարունակվել են աշխատանքները նախորդ տարիներին մշակված և ՀՀ կառավարության կողմից հաստատված ՀՀ մարզերի զարգացման հիմնախնդիրների լուծման միջոցառումների ծրագրի իրականացման ուղղությամբ:

Իր իրավասության սահմաններում ՀՀ տարեկան բյուջեի կազմման և բյուջետային միջոցների արդյունավետ օգտագործման ապահովման նպատակով նախարարությունը նախապատրաստել է 2006թ. ՀՀ պետական բյուջեի ուղերձի նախագծում ընդգրկված «ՀՀ տնտեսական զարգացման հիմնական ուղղությունները» հատվածը և 2006 – 2008թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրի նախագծի վերաբերյալ առաջարկությունները:

Նախապատրաստվել և ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն են ներկայացվել 7 ընկերությունների և 1 օբյեկտի գույքի գնահատման ելակետային տվյալների փաթեթներ:

Տնտեսական զարգացման ծրագրերի և տնտեսական քաղաքականության մշակման ու ճշգրտման տեղեկատվական ապահովման նպատակով իրականացվել է ոլորտներում գործող 200 ընկերությունների գործունեության հիմնական արտադրական ցուցանիշների ամսական վարչական մոնիտորինգ, կատարվել են տնտեսության առանձին ոլորտների զարգացման միտումների ուսումնասիրություններ, ներկայացվել են առաջարկություններ ՀՀ նախարարություններ և այլ գերատեսչություններ:

Նախարարության դեմ ՀՀ դատարաններում ներկայացվել է չորս հայցադիմում, որոնց կապակցությամբ լսված դատական գործերով 2-ում հայցը մերժվել է, 1-ը թողնվել է առանց քննության, 1-ը ընթացքի մեջ է:

«Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի պահանջների համաձայն 2003-2005թթ նախարարության աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների քաղաքացիական ծառայողներից 227-ը (նախատեսված 276-ից) ատեստավորվել են, որից 55-ը՝ 2005 թվականի ընթացքում:

2.2. Առևտրի ոլորտ

Նախարարության կողմից 2005թ. կատարված աշխատանքներն ուղղվել են ոլորտը կարգավորող օրենսդրության կատարելագործմանը, գործարարների համար հավասար մրցակցային դաշտի ապահովմանը, միջազգային շուկաներում հայրենական ապրանքարտադրողների շահերի պաշտպանությանը:

Սպառողական շուկա և ծառայություններ: ՀՀ ներքին շուկայում 2005թ. հունվար-նոյեմբեր ամիսներին առևտրաշրջանառության և ծառայությունների ծավալը կազմել է 1187.4 մլրդ դրամ, աճի տեմպը՝ 111.5%, այդ թվում՝ մանրածախ առևտրաշրջանառության ծավալը կազմել է 740.3 մլրդ դրամ, աճի տեմպը՝ 109.0%, իսկ ծառայությունների ծավալը՝ 281.4 մլրդ դրամ, աճի տեմպը՝ 116.7%:

Հաշվետու ժամանակաշրջանում ավարտվել է 2004-2005թթ. իրականացվող առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտի օրենսդրական դաշտի ձևավորման գործընթացը: Մասնավորապես՝ ընդունվել են «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող ՀՀ կառավարության հինգ որոշումներ: 2006թ. հունվարի 1-ից օրենքների կիրարկումն ապահովելու նպատակով աշխատանքներ են տարվում տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հետ՝ օրենքով իրենց վերապահված լիազորությունների առավել արդյունավետ իրականացման ուղղությամբ:

Արտաքին առևտուր: ՀՀ արտաքին առևտուրը պահպանել է աճի տեմպերը ինչպես արտահանման, այնպես էլ ներմուծման ծավալներում: Արտաքին առևտրաշրջանառության ծավալը ըստ նախնական տվյալների կազմել է 2790.7 մլն դոլար, աճի տեմպը՝ 135.1%: Ընդ որում՝ արտահանման ծավալը կազմել է 970.3 մլն դոլար, աճի տեմպը՝ 135.7 %, իսկ ներմուծումը՝ 1820.4 մլն դոլար, աճի տեմպը՝ 134.7 %:

Ոլորտում նախարարության կողմից իրականացված միջոցառումների հիմնական նպատակն է եղել գործընկեր պետություններ հայկական ապրանքների արտահանման ժամանակ սակագնային և ոչ սակագնային լծակների նվազեցման հարցում հայրենական ապրանքարտադրողներին աջակցելը: Մասնավորապես, հաշվի առնելով ՌԴ, որպես արտահանման լայն շուկա, կարևորությունը՝ փոփոխություններ են առաջարկվել ՀՀ կառավարության և ՌԴ կառավարության միջև ազատ առևտրի մասին համաձայնագրում, ինչն ուղղված է ապրանքների առավել ազատական շարժի և ԱՀԿ նորմերի պահանջներին համապատասխանության ապահովմանը: Նշված արձանագրությունն արդեն իսկ համաձայնեցվել է ռուսաստանյան կողմի հետ և անցել ներպետական համաձայնեցման ընթացակարգը:

Բանակցություններ են սկսվել ՀՀ կառավարության և ՌԴ կառավարության միջև փոխադարձ առևտրում անուղղակի հարկերի գանձման սկզբունքների մասին համաձայնագրում փոփոխություն կատարելու ուղղությամբ, ինչը նպատակաուղղված է ՀՀ ներմուծման ժամանակ բնական գազի և նավթամթերքի՝ ներառյալ գազային խտանյութի նկատմամբ ավելացված արժեքի հարկի զրոյական դրույքաչափի կիրառման հետ:

Պահպանելով առևտրի ազատական սկզբունքները՝ նախարարությունը մասնակցել է ՀՀ արտաքին տնտեսական գործունեությունը կարգավորող օրենսդրական և նորմատիվային դաշտի կատարելագործմանն, ինչպես նաև մի շարք միջազգային փաստաթղթերի մշակմանը: Մասնավորապես՝ փոփոխություն է կատարվել ծագման երկրի որոշման կանոններում, ինչն ուղղված է հայ գործարարների շահերի պաշտպանությանը: 2005թ. ընդլայնվել է ՀՀ առևտրային ներկայացուցչությունների աշխարհագրությունը և նշանակվել է ներկայացուցիչ Եվրամիության երկրներում:

2.3. Ներդրումային ոլորտ

Իրականացված ներդրումային քաղաքականությունը նպատակաուղղվել է ներդրումներին խոչընդոտող գործոնների վերացմամբ/թուլացմամբ ներդրումային և գործարար բարենպաստ միջավայրի ձևավորմանը, ներդրումային քաղաքականության թափանցիկության բարձրացմանը, ներդրումների ծավալների մեծացմանը, ինչպես նաև վերոհիշյալ նպատակներին ծառայող շուկայական ենթակառուցվածքի զարգացմանը:

Իրականացված ներդրումային քաղաքականության արդյունքում 2005թ. ինը ամիսների ընթացքում օտարերկրյա ներդրումների ծավալը կազմել է 225,7 մլն դոլար: 2004թ. ինն ամիսների համեմատությամբ 2005թ. նույն ժամանակահատվածում, օտարերկրյա ընդամենը ներդրումների ծավալն աճել է 28,7%-ով, իսկ ուղղակի ներդրումների ծավալը՝ 20,2%-ով: Տարվա կտրվածքով օտարերկրյա ներդրումների ծավալը սպասվում է 350-380 մլն դոլար:

2005թ. շարունակվել են ՀՀ ներդրումային ոլորտը կարգավորող իրավապայմանագրային դաշտի բարելավման ու կատարելագործման աշխատանքները:

ՀՀ կառավարության կողմից հաստատված ՀՀ ներդրումային քաղաքականության հայեցակարգի հիմանական նպատակն է բարձրացնել ՀՀ ներդրումային քաղաքականության թափանցիկությունը և ամրագրել վերջինիս հիմնական սկզբունքները և ուղղությունները: Մշակվել և ՀՀ կառավարության հաստատմանն է ներկայացվել «Ներդրումների մասին» ՀՀ օրենքի նախագիծը: Ծավալուն աշխատանքներ են տարվել ներդրումային զգալի ներուժ ունեցող հիմնական գործընկեր երկրների հետ երկկողմ իրավապայմանագրային դաշտի ձևավորման ուղղությամբ և շարունակվել են

բանակցությունները օտարերկրյա ներդրումները կարգավորող իրավապայմանագրային դաշտի կարևորագույն մասը կազմող՝ «Ներդրումների խրախուսման և փոխադարձ պաշտպանության մասին» միջկառավարական Համաձայնագրերի ստորագրման ուղղությամբ:

Ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության և Լատվիայի Հանրապետության կառավարության միջև ներդրումների խրախուսման և փոխադարձ պաշտպանության մասին» Համաձայնագիրը:

Վավերացվել են ՀՀ և Նիդերլանդների Թագավորության, Ռուսաստանի Դաշնության, Եգիպտոսի Արաբական Հանրապետության կառավարությունների միջև ներդրումների խրախուսման և փոխադարձ պաշտպանության համաձայնագրեր:

Մինչ օրս ստորագրված Համաձայնագրերի թիվը կազմել է 34, բանակցային գործընթացի մեջ գտնվողներինը՝ 24: Ստորագրման են նախապատրաստված 5 Համաձայնագրեր (Բոսնիա և Հերցոգովինա, Իսլանդիա, Կորեա, Լիտվա, Շվեդիայի Թագավորություն):

Ավարտվել է ՀՀ կառավարության միջնորդությամբ, Համաշխարհային Բանկի և Միջազգային Ֆինանսական Կորպորացիայի (ՄՖԿ) համատեղ կառույց հանդիսացող Օտարերկրյա Ներդրումների Խորհրդատվական Ծառայության հետ համատեղ իրականացվող «Հայաստանում ձեռնարկատիրական գործունեության իրականացման վարչական ընթացակարգերի գնահատում» հետազոտության իրականացումը, Հետազոտության իրականացման արդյունքում կազմված գործարար միջավայրի բարելավմանն ուղղված Միջոցառումների ժամանակացույցի նախագիծը, համաձայնեցվելով շահագրգիռ գերատեսչությունների հետ, ներկայացվել է Գործարարության Աջակցման Խորհրդի քննարկմանը:

Սերտ համագործակցություն է իրականացվել ներդրողներին և ներդրումներին օժանդակող և խթանող, ինչպես նաև ներդրումների և ներդրողների պաշտպանության հարցերով զբաղվող մասնագիտացված միջազգային և հայաստանյան կառույցների հետ, մասնավորապես ակտիվ համագործակցություն է ծավալվել ՁՀԳ, ՀՀ ԱԱՊ, Հայաստանի գործարարների և արդյունաբերողների միության և գործարարների ընդհանրացված շահերը ներկայացնող այլ միությունների հետ: Այդ կառույցները մշտապես ներգրավվել են նախապատրաստվող օրենսդրական ակտերի նախագծերի քննարկումներին, իսկ նշված երեքը նաև 2005թ.-ի ընթացքում անցկացված ներդրումային և գործարար համաժողովների ու առևտրային ցուցահանդես-վաճառքների նախապատրաստական աշխատանքներին:

Կարևորելով ՀՀ՝ միջազգային մասնագիտական կառույցներում, միջազգային հեղինակավոր կազմակերպություններում և, առհասարակ, ներդրումային նպաստավոր վարկանիշի ձևավորման աշխատանքների անհրաժեշտությունը՝ Նախարարության կողմից նախաձեռնվել և իրականացվել են նպատակաուղղված աշխատանքներ նման

կազմակերպությունների կողմից հրապարակվող վարկանիշային գնահատականների հրատարակություններում համապատասխան ճշգրտումներ իրականացնելու ուղղությամբ: Շարունակվել են աշխատանքները Տնտեսական Համագործակցության և Զարգացման Կազմակերպության (ՏՀԶԿ) արտահանմանը պաշտոնապես սատարվող վարկերի տրամադրման կարգի համաձայն վարկեր ստացող երկրների ռիսկայնության՝ Հայաստանին տրված ռիսկայնության գործակցի բարելավման ուղղությամբ: ՀՀ դեսպանությունների և ԵՄ երկրներում ՀՀ առևտրային ներկայացուցչի ներգրավմամբ իրականացված համապատասխան միջոցառումների արդյունքում սպասվում է, որ 2006թ. հունվարի վերջին ՏՀԶԿ փորձագիտական խմբի առաջիկա նիստում Հայաստանին տրվելիք վարկանիշի քննարկման ժամանակ՝ կներկայացվեն և կդիտարկվեն վարկանիշի վրա դրական ազդեցություն ունեցող հնարավոր բոլոր գործոնները:

Կազմակերպվել են մի շարք գործարար համաժողովներ, մասնավորապես՝ Երևանում կայացան հայ-իտալական, հայ-լատվիական գործարար համաժողովները: Տարվա ընթացքում անց են կացվել նաև հայ-ճապոնական 2 համաժողովներ (Մոսկվայում և Երևանում), հայ-ֆիննական, հայ-ռուսական և այլ գործարար համաժողովներ:

2.4. Տնտեսական մրցակցության պաշտպանության քաղաքականության ոլորտ

2005 թվականի ընթացքում իրականացվել է տնտեսական մրցակցության պաշտպանության ոլորտը կարգավորող օրենսդրության կատարելագործմանն ուղղված միջոցառումներ: Մասնավորապես, մշակվել և ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը, որի նպատակն է շուկայում գերիշխող դիրքի չարաշահման, ինչպես նաև անբարեխիղճ մրցակցության դրսևորումների առավելագույն կանխարգելումը:

2.5. Գիտական, ինովացիոն և տեխնոլոգիական զարգացման ոլորտ

2005թ. նախարարության կողմից հետևողականորեն իրականացվել են «Ազգային ինովացիոն համակարգի ձևավորման համար անհրաժեշտ օրենսդրական հենքի ստեղծում» գերակա խնդրի լուծման հետ կապված աշխատանքներ: Մշակվել և ՀՀ կառավարության կողմից հաստատվել են «Հայաստանի Հանրապետությունում ինովացիոն գործունեության հայեցակարգը» և «Հայաստանի Հանրապետությունում ինովացիոն համակարգի ձևավորման և զարգացման 2005-2010 թվականների ծրագիրը»:

ՀՀ կառավարության կողմից ՀՀ ԱԺ է ներկայացվել «Ինովացիոն գործունեությանը պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

Նախարարության համակարգի գիտական կազմակերպությունների կողմից կատարված աշխատանքների ծավալը կազմել է մոտ 1.2 մլրդ դրամ, որը 28,8 %-ով գերազանցում է անցյալ տարվա ցուցանիշը: Ֆինանսավորումը ստացվել է ինչպես բյուջետային, այնպես էլ այլ աղբյուրներից, այդ թվում՝ միջազգային դրամաշնորհներից և պատվերներից, ինչի շնորհիվ հաջողությամբ շարունակվել են գիտահետազոտական աշխատանքները:

Ա. Ի. Ալիխանյանի անվան Երևանի ֆիզիկայի ինստիտուտում կատարվել են հետազոտություններ միջուկային ֆիզիկայի կարևորագույն խնդիրների վերաբերյալ, մասնավորապես, ուսումնասիրվել են քվարկների և գլյուոնների հատկությունները և նրանց դերը միջուկներում և միջուկային ռեակցիաներում: Վերաթողարկվել է ինստիտուտի էլեկտրոնային օղակաձև արագացուցիչը, և առաջին ֆոտոնային փնջերը՝ ծնված ամորֆ և բյուրեղային թիրախների վրա, դուրս են բերվել փորձարարական սրահ: Դրան նախորդել են արագացուցչի արդիականացման և նորացման մեծ ծավալի աշխատանքներ, փորձարկվել են արագացման նոր ռեժիմներ ֆիզիկական գիտափորձերի համար: Ինստիտուտը ստանձնել է «Հայաստանի Հանրապետությունում ինովացիոն համակարգի ձևավորման և զարգացման 2005-2010 թվականների ծրագրով» նախատեսված Ինովացիոն ենթակառուցվածքների միասնական տեղեկատվական ցանցի ստեղծման աշխատանքները:

«Կոմետա» ԲԲԸ-ում տեսական և փորձնական հետազոտություններ են կատարվել ծովի մակերևույթի վրա ռադիոլոկացիոն ընդլայնական փոքր կտրվածք ունեցող օբյեկտների հայտնաբերման վերաբերյալ: Այս ուղղությամբ նախատեսվում է գիտական հեռանկարային համագործակցության պայմանագրի կնքում ԱՄՆ հետազոտողների հետ:

«Կենսատեխնոլոգիայի ԳՀԻ» ՓԲԸ-ում շարունակվել են հետազոտությունները կենսաբանորեն ակտիվ նյութերի կենսատեխնոլոգիայի բնագավառում, մշակվել են որոշ կենսաբանական ակտիվ պրեպարատների փոքրածավալ արտադրության տեխնոլոգիական հիմունքները:

«Անդրոն ԳՀԻ -Տեխնոպարկ» ՓԲԸ կազմում ընդգրկվել է ՓՄՁ 3 նոր սուբյեկտ, որոնց գործունեությունը տարվա կտրվածքով ընդլայնվել է արտադրության ծավալների, տեխնիկական վերազինման և արտադրվող տեսականու բազմազանեցման, ինչպես նաև միմյանց միջև գիտաարտադրական համագործակցության զարգացման ուղղությամբ:

Երևանի «Պլաստպոլիմեր» ԳՀԻ ՓԲԸ-ում աշխատանքներ են իրականացվել վինիլացետատի և նրա հիման վրա պոլիմերների սինթեզի հետազոտման բնագավառում: Կազմակերպվել է հատուկ պոլիմերային ծածկույթների արտադրությունը շենքերը,

շինությունները և սարքավորումները ռադիոակտիվ նյութերով աղտոտվելուց պաշտպանելու և դեզակտիվացման նպատակով (ատոմային էլեկտրակայանների համար), պոլիվինիլբուտիրալի հիմքով ստացված թաղանթներից տրիպլեքս տիպի անբեկոր ապակիների արտադրությունը (կիրառելի են արագընթաց ավտո- և ավիատրանսպորտում), հատուկ մակնիշի պոլիվինիլացետատային դիսպերսիաների արտադրությունը պոլիգրաֆիական, փայտամշակող, ծխախոտի և սննդի արդյունաբերության համար: Շարունակվել է համագործակցությունը հանրապետության ծխախոտ արտադրող ձեռնարկությունների հետ հատուկ սոսինձների մատակարարման բնագավառում, ինչպես նաև Երևանի ոսկերչական և Զանգեզուրի պղնձամոլիբդենային գործարանների հետ:

«Գիտատեխնիկական լրատվության հայկական կենտրոն» ՊՈԱԿ-ը միջպետական փոխանակման գործընթացներում իրականացրել է ՀՀ համագործակցության համակարգումը (կնքվել են համապատասխան պայմանագրեր ԱՊՀ մասնակից երկրների միջպետական գիտատեխնիկական և ինովացիոն ծրագրերի իրականացման համար), գիտահանրամատչելի տեղեկատվության ապահովումը «Գիտություն և տեխնիկա» ամսագրի միջոցով, ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներում կիրառվող ծրագրային և լրատվական արտադրանքի կարևոր բնութագրերի ուսումնասիրումը:

Նախարարությունը համակարգել է վերոնշյալ գիտական կազմակերպությունների կողմից առաջարկությունների պատրաստումը գիտատեխնիկական ոլորտում համագործակցության վերաբերյալ Լատվիայի, Ղազախստանի, Տաջիկստանի հանրապետությունների, Ռուսաստանի Դաշնության, Մոսկվայի մարզի կառավարության, Կորեայի Հանրապետության, Ավստրիայի, Իրանի, Թայլանդի Թագավորության (մշակված է Համատեղ գործողությունների պլանը և ժամանակացույցը 2005-2007թթ. համար) հետ: Առաջարկությունները ներկայացվել են համապատասխան միջկառավարական հանձնաժողովների նիստերում քննարկելու համար:

2.6. Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտ

Հաշվետու ժամանակաշրջանում տեղեկատվական տեխնոլոգիաների (ՏՏ) ոլորտում նախարարության գործունեությունը հիմնականում նպատակաուղղված է եղել Ինֆորմացիոն տեխնոլոգիաների արդյունաբերության զարգացման հայեցակարգի դրույթների իրականացմանը:

Ընդհանուր առմամբ ՏՏ ոլորտում զարգացման տեմպերը պահպանվել են: Առաջատար ընկերությունների մեծ մասը ընդլայնել են արտադրության և ծառայությունների ծավալը:

Ոլորտում ակտիվ աշխատում են շուրջ 120 ձեռնարկություններ, աշխատատեղերի քանակն աճել է շուրջ 200-ով, արտադրության ծավալը գնահատվում է շուրջ 55-60 մլն դոլար, որից մոտ 90% արտահանվում է: ՀՆԱ-ում ՏՏ մասնաբաժինը կազմել է շուրջ 1,7 %, օտարերկրյա ներդրումների ծավալը 2005 թ. 9 ամսվա ընթացքում կազմել է 9,8 մլն դոլար (տարվա արդյունքում այն գերազանցելու է 10 միլիոնը):

«Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովելու նպատակով նախարարության կողմից մշակվել և ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով հաստատվել են չորս կարգեր:

Իրականացվել են մի շարք ծրագրեր՝ ուղղված արտահանման խթանմանը: Մասնավորապես, Տեղեկատվական հասարակության Թունիսի գագաթաժողովի ցուցահանդեսին կազմակերպվել է ՀՀ ՏՏ ոլորտը ներկայացնող ցուցադրական ստենդ:

Կանադայի Օտտավա քաղաքում գործող ՀՀ ՏՏ ոլորտի ներկայացուցչության միջնորդությամբ կնքվել են մի շարք գործարար պայմանագրեր հայաստանյան ընկերությունների հետ, իսկ ներկայումս նախապատրաստական աշխատանքներ են տարվում երեք խոշոր պայմանագրերի կնքման ուղղությամբ:

Նախապատրաստական աշխատանքներ են տարվել Եվրոպայում (ք.Վիեննա) ՏՏ գծով Հայաստանի ներկայացուցչության բացման ուղղությամբ: «Ալկատել» ընկերության հետ ստորագրվել է համագործակցության հուշագիր:

«Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի գործունեության շրջանակներում իրականացվել են կրթական և վերապատրաստման մի շարք ծրագրեր: Անցկացվել են ուսումնական դասընթացներ տեխնիկական թեմաներով (Linux, Microsoft ցանցի անվտանգություն, MySQL, Java):

Երևանում «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի և Տեղեկատվական տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության կողմից կազմակերպվել է ՏՏ ոլորտի միջազգային “DIGITECH-2005” ցուցահանդես և «Տեղեկատվական տեխնոլոգիաները բիզնեսում» թեմայով համաժողով:

ՀՀ վարչապետի գլխավորությամբ ՀՀ պատվիրակությունը մասնակցել է Թունիսում կայացած Տեղեկատվական հասարակության համաշխարհային գագաթաժողովին, որի ընթացքում տեղի ունեցած մրցույթում հայաստանյան երկու արտադրանք բարձր որակի համար արժանացել են մրցանակի: Գագաթնաժողովի շրջանակներում հուշագիր է ստորագրվել, համաձայն որի էլեկտրոնային բովանդակության մրցութային տարածաշրջանային կենտրոն ճանաչվել է Հայաստանը:

2.7. Արդյունաբերական ոլորտ

2005թ. արդյունաբերական համալիրի զարգացման քաղաքականությունը հիմնականում նպատակաուղղվել է գործունեության հետագա կայունացմանը, արտահանման կողմնորոշում ունեցող արտադրությունների մրցունակության և նրանց արտադրանքի որակական ցուցանիշների բարելավմանը, օտարերկրյա ներդրումների ներգրավմամբ արտադրական հզորությունների լիարժեք և արդյունավետ օգտագործմանը, ինչպես նաև արտադրության կազմակերպման ժամանակակից մեթոդների և նոր տեխնոլոգիաների կիրառմանը:

Արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալը 11 ամսվա տվյալներով կազմել է 489.2 մլրդ դրամ (առանց էներգետիկայի), աճի տեմպը՝ 106.6%:

Նախարարության կողմից իրականացված մոնիտորինգն ընդգրկել է 200 ընկերությունների տվյալներ, որոնք թողարկում են ստորև նշված ոլորտների ընդհանուր արտադրանքի ծավալի 90%-ից ավելին:

<u>Մեքենաշինական արդյունաբերություն:</u> Հանրապետության մեքենաշինական բնագավառի մոնիտորինգի ենթարկված 68 ընկերություններից աշխատել են 43-ը, նախորդ տարվա 33-ի դիմաց, որոնք 2005թ. թողարկել են 5.3 մլրդ դրամի արտադրանք, իրացումը կազմել է 122.2%: Չնայած աշխատող ձեռնարկությունների թվաքանակի աճին, ճյուղում գրանցվել է ապրանքային արտադրանքի ծավալների անկում՝ նախորդ տարվա նկատմամբ կազմելով 91.4%, կրճատվել է նաև արտահանման ծավալը - 74.8%: Արտադրանքի ծավալների ընդհանուր կրճատման պայմաններում, այնուամենայնիվ առկա են ձեռքբերումներ հաստոցագործիքաշինական և սարքաշինական բնագավառներում, որոնց աճի տեմպը համապատասխանաբար կազմել է 108.2% և 139%: Համախառն արտադրանքի ծավալների դրամական արտահայտությամբ կրճատումը այս ճյուղի ընկերություններում, որոնք արտադրանքի գերակշիռ մասը արտահանում են, հիմնականում կապված է դրամի արժեվորման հետ:

<u>Քիմիական արդյունաբերություն:</u> Ոլորտում մոնիտորինգի ենթարկված 22 ընկերություններից աշխատել են 16-ը՝ ապահովելով 14.5 մլրդ դրամի արտադրանք, աճի տեմպը կազմել է 166%: Իրացման ծավալը կազմել է 8.1 մլրդ դրամ, այդ թվում՝ արտահանումը կազմել է 3.9 մլրդ դրամ: Ծավալների աճը հիմնականում պայմանավորված է «Նաիրիտ Գործարան» ՓԲԸ գործունեության հետ, որը նախորդ տարվա նկատմամբ ապահովել է 201.2 % աճի տեմպ, «Ջեներալ Տրանսուորլդ Մենյուֆեքչրինգ Քամփնի» ԲԲԸ՝ 104.9%, Երևանի «Քիմդեղագործական ֆիրմա» ԲԲԸ՝ 135.4%, «Շեն Կոնցեռն» ՍՊԸ՝ 129%, «Լիկվոր» ՍՊԸ՝ 125.2% և այլն: Վերագործարկվել են Վանաձորի «Պրոմեթեյ-Խիմպրոմ» ընկերության հզորությունները՝ 2005թ. 4-րդ եռամսյակում արտադրելով 144.9

մլն դրամի սինթետիկ կորունդների և կալցիումի կարբիդ, որն իր դրական ազդեցությունն է ունեցել քիմիական համալիրի արտադրական ծավալների աճի վրա:

Թեթև արդյունաբերություն: Ոլորտում մոնիտորինգի ենթարկված ձեռնարկություններից աշխատել են 19-ը՝ նախորդ տարվա նկատմամբ 2-ով ավելի՝ թողարկելով 9.3 մլրդ դրամի արտադրանք, նախորդ տարվա համեմատ գրանցվել է անկում՝ 78.6%: Ճյուղում համախառն արտադրանքի ծավալների անկման հիմնական պատճառներից են ձևավորված առևտրային կոնյուկտուրայով պայմանավորված սպառման շուկաների սահմանափակումը, ինչպես նաև մի շարք ընկերությունների կողմից 2005թ. համար պայմանագրերի բացակայությունը: Միաժամանակ, արտահանման կողմնորոշում ունեցող ընկերություններում՝ ֆիզիկական ծավալների պահպանման պայմաններում համախառն արտադրանքի ծավալների՝ դրամական արտահայտությամբ անկումը հիմնականում հետևանք է գործող պայմանագրերի ժամկետներում դրամի զգալի արժեվորման: Այնուամենայնիվ 2004թ. համեմատությամբ արտադրանքի ծավալները զգալիորեն ավելացել են. «Հ. Էդ. Հայաս Գրուպ» ԲԲԸ՝ 193.1%, «Գարուն» ԲԲԸ՝ 137.8%, Սպիտակի «Վանուհի» ԲԲԸ՝ 123.3%, «Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ՝ 119.6% և Եղվարդի «Մետաղագործ» ԲԲԸ՝ 226.6%:

Փայտամշակման արդյունաբերություն: Մոնիտորինգի ենթարկված 7 ընկերություններից աշխատել են 4-ը, անցյալ տարվա նկատմամբ բոլորի մոտ էլ («Զեյթունի կահույքի» ԲԲԸ, Մասիսի «Գոֆրոտարա» ԲԲԸ, «Երևան-Կահույք» ԲԲԸ, «Իջևանի ՓՄԿ» ԲԲԸ) տեղի է ունեցել ծավալների անկում, որի արդյունքում ճյուղում արձանագրվել է թողարկման 71.2%: Նշված ընկերություններն աշխատում են հիմնականում տեղական շուկայի համար, և ծավալների անկումը պայմանավորված է ներքին շուկայի պահանջարկի սահմանափակությամբ:

Ակնագործություն և ոսկերչություն: 2005թ. 11 ամիսների տվյալներով Հանրապետությունում թողարկվել է 104 մլրդ դրամի արտադրանք (տարեկան գնահատվող ծավալը՝ 115 մլրդ դրամ), ընդ որում իրացվել է 102.4 մլրդ դրամի (տարեկան գնահատվող ծավալը՝ 112 մլրդ դրամ), արտահանվել՝ 101 մլրդ դրամի արտադրանք (տարեկան գնահատվող ծավալը՝ 110 մլրդ դրամ): Նշված ցուցանիշները գրեթե չեն տարբերվում 2004թ. համապատասխան ցուցանիշներից: Ճյուղում զբաղված են ավելի քան 4000 մարդ, որոնց միջին աշխատավարձը կազմում է 70 հազար դրամ:

«Քիմբերլի գործընթացի» հավաստագրման ծրագրի պահանջների իրականացման արդյունավետության բարձրացման նպատակով ընդունվել են «Լիցենզավորման մասին ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքը, «Պետական տուրքի մասին ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքը, ինչպես նաև «Հայաստանի

Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 23-ի N505-ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշումը:

Ոլորտի շարունակական զարգացման ապահովման նպատակով ՀՀ կառավարության որոշմամբ փոփոխության ենթարկվեց ակնագործության և ոսկերչության ոլորտի զարգացման 2004-2006թթ. միջնաժամկետ ծրագիրը, որը պայմանավորված էր 2004թ. ստեղծված անբարենպաստ պայմանների հետևանքով նախատեսված միջոցառումների կատարման անհնարինությամբ:

«Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև 2002-2006 թվականներին Հայաստանի Հանրապետություն չմշակված բնական ալմաստներ մատակարարելու մասին» միջկառավարական համաձայնագիրը ինչպես նախորդ տարի, այնպես էլ 2005թ. գործեց անարդյունավետ: Նախատեսված 450.0 հազ. կարատ ոսկերչական նշանակության ալմաստի հումքից հայկական ընկերություններին վաճառվել է շուրջ 183.8 հազ. կարատ, իսկ ոսկերչական նշանակության համար ոչ պիտանի (տեխնիկական նշանակության) ալմաստի հումք ընդհանրապես չի մատակարարվել: Նախարարության կողմից և Հայ-ռուսական միջկառավարական հանձնաժողովի շրջանակներում աշխատանքներ են իրականացվել նշված Համաձայնագրի արդյունավետությունը բարձրացնելու, մասնավորապես՝ վերաարտահանման արգելքի վերացման ուղղությամբ, որոնք, սակայն, մերժվել են ՌԴ կողմից:

Որպես Քիմբերլի գործընթացի մասնակից պետություն Մոսկվայում կայացած «Քիմբերլի Գործընթացի» տարեկան պլենար նիստին է ներկայացվել և դրական գնահատականի արժանացել ՀՀ 2004թ. «Քիմբերլի Գործընթացի Հավաստագրման Ծրագրի» տարեկան հաշվետվությունը: Կազմակերպվել է Քիմբերլի գործընթացի մոնիտորինգի խմբի պաշտոնական այցը ՀՀ, որի ընթացքում ուսումնասիրվել է Ծրագրով ՀՀ ստանձնած պարտավորությունների կատարման համապատասխանությունը:

Կազմակերպվել է «Ոսկեգործություն և ակնագործություն-2005» միջազգային ցուցահանդեսը, որին իրենց մասնակցությունն են ցուցաբերել ոչ միայն հայկական, այլև օտարերկրյա մի շարք հայտնի ընկերություններ:

<u>Հանքարդյունաբերություն, մետաղագործություն և շինանյութերի արտադրություն:</u> Ոլորտում մոնիտորինգի ենթարկվող 28 ընկերություններից աշխատել են 17-ը, արդյունքում արտադրության ծավալների աճի տեմպը կազմել է 114%: Նախորդ տարվա 218.7 մլրդ դրամի փոխարեն թողարկվել է 248.5 մլրդ դրամի արտադրանք: Իրացման աճի տեմպը կազմել է 143%, իսկ արտահանմանը՝ 118.8%: Ոլորտի ընկերություններում փաստացի աշխատողների թվաքանակը կազմել է 10345 հոգի՝ նախորդ տարվա 10142-ի դիմաց՝ 80000 դրամ միջին ամսական աշխատավարձով: Ճյուղի առաջընթացը ապահովել է

«Մաքուր Երկաթի գործարան» ԲԲԸ՝ 151.9%, «AMP» ՍՊԸ՝ 247.7%, իսկ շինանյութերի արտադրության գծով «Արարատցեմենտ» ԲԲԸ՝ 126%, «Միկա Ցեմենտ» ՍՊԸ՝ 124.4%:

Պայմանագրային պարտավորությունների կատարման նկատմամբ պարբերաբար իրականացվող հսկողության շնորհիվ ապահովվեց «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ-ի բաժնետոմսերի դիմաց վճարումների ամբողջությամբ և ժամանակին կատարումը: 2005թ. սկվել են «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ-ի հետ կոնցեսիոն պայմանագրի կնքման նախապատրաստական աշխատանքները: Զուգահեռաբար «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ-ի բաժնետերերի հետ բանակցություններ են տարվել ընկերության զարգացման Գլխավոր Ծրագրի հիմնական դրույթների շուրջ:

2005թ. նոյեմբեր ամսին վերագործարկվել է «ՌուսալԱրմենալ» ՓԲԸ-ն, որտեղ առաջին փուլում կատարվել է մոտ 70 մլն դոլարի ներդրում, գործարանը հագեցվել է ժամանակակից մեքենա-սարքավորումներով և նախատեսվում է 2006թ. մայիսին վերագործարկել ամբողջ հզորությամբ:

«ACP» ՓԲԸ-ում ավարտվում են Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրի լրահետախուզման, ինչպես նաև Ալավերդու պղնձաձուլական գործարանի վերազինման ու բնապահպանական միջոցառումների ֆինանսավորման հարցի լուծման ուղղությամբ աշխատանքները:

Մեծածավալ ներդրումներ են կատարվել Բյուրեղավանի «Գլաս Ուորլդ Քամփնի» ԲԲԸ /նախկին «Բյուրեղապակու գործարան»/, միայն նորագույն տեխնոլոգիաների և մեքենասարքավորումների ներկրման համար ծախսվել է մոտ 40 մլն ԱՄՆ դոլար:

Լոնդոնում տեղի ունեցած «Հանքավայրեր և Ներդրումներ 2005» հանքարդյունաբերության համաշխարհային գագաթաժողովին իր մասնակցությունը ցուցաբերեց նաև հայաստանյան պատվիրակությունը: Այդ օրերին Լոնդոնում գործող ցուցահանդեսի հայկական տաղավարում Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտին առնչվող ընդհանուր, օրենսդրական և ընկերություններին առնչվող տեղեկատվության հետ մեկտեղ ցուցադրվել են նաև այդ նպատակով հատուկ նկարահանված տեսաֆիլմեր: Հրատարակվել է միջազգային հեղինակություն վայելող «Մայնինգ Ջորնալ» ամսագրի հատուկ թողարկումը՝ նվիրված Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտին:

2.8. Ռազմարդյունաբերական համալիրի և ռազմատնտեսական ծրագրերի ոլորտ

Ռազմարդյունաբերական համալիրում գործող կազմակերպությունների ապրանքային արտադրանքի ծավալները 2004 թ. նկատմամբ աճել են 10 %-ով և կազմել են 461.8 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ 45 %-ով աճել են նաև արտահանման ծավալները:

Ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ռուսաստանի Դաշնության Կառավարության միջև երկկողմ ռազմատեխնիկական համագործակցության ընթացքում օգտագործվող և ձեռք բերված մտավոր գործունեության արդյունքների նկատմամբ իրավունքների փոխադարձ պաշտպանության մասին» Համաձայնագիրը:

Իրականացվել են «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև պաշտպանության բնագավառի արդյունաբերության ձեռնարկությունների միջև արտադրական և գիտատեխնիկական կոոպերացիայի մասին» 30.03.1994 թ. կնքված Համաձայնագրի շրջանակներում նախատեսված ամենամյա միջոցառումները:

Հաստատվել են երեք ծրագրեր /գաղտնի/, ՀՀ տնտեսության զորահավաքային նախապատրաստության գործընթացը կարգավորող ՀՀ կառավարության համապատասխան որոշումներ, քաղպաշտպանության հանրապետական երկու ծրագրեր:

2.9. Արտաքին տնտեսական քաղաքականության և արտաքին տնտեսական համագործակցություն ոլորտ

2005 թ. ոլորտում նախարարության կողմից կատարված աշխատանքները ուղղված են եղել արտաքին տնտեսական քաղաքականության հիմնական սկզբունքների պահպանմանն ու զարգացմանը, այս ոլորտում ենթակառուցվածքային միավորների կայացմանն ու կատարելագործմանը, առևտրատնտեսական համաձայնագրերով սահմանված դրույթների կատարմանը, առևտրատնտեսական հարաբերությունների հիմնական սկզբունքների մշակմանն ու իրագործմանը, համապատասխան իրավական դաշտի ստեղծմանը:

Հաշվետու ժամանակաշրջանում աշխատանքներ են իրականացվել հայ-բելառուսական, հայ-ուկրաինական, հայ-եգիպտական, հայ-իրանական, հայ-չինական, հայ-վրացական, հայ-ղազախական միջկառավարական հանձնաժողովների նիստերի արդյունքում ստորագրված արձանագրություններով ամրագրված պարտավորությունների և ձեռքբերված պայմանավորվածությունների կատարման ուղղությամբ: Երևանում անց է կացվել հայ-ավստրիական առևտրատնտեսական և գիտատեխնիկական համագործակցության խառը հանձնաժողովի երկրորդ համատեղ նիստը, որի ընթացքում մշակվել և ստորագրվել է հայ-ավստրիական առևտրատնտեսական և գիտատեխնիկական համագործակցության խառը հանձնաժողովի երկրորդ նիստի եզրափակիչ Արձանագրությունը: Շարունակվել են նախապատրաստական աշխատանքները հայ-

եգիպտական միջկառավարական հանձնաժողովի հերթական համատեղ նիստի կազմակերպման, ինչպես նաև նախորդ նիստի Արձանագրությամբ ամրագրված կետերի կատարման ուղղությամբ:

Նախապատրաստվել և ՀՀ ԱԳՆ են ներկայացվել համապատասխան տեղեկանքներ և առաջարկություններ Հայաստանի Հանրապետության և այլ երկրների միջև երկկողմ առևտրատնտեսական համագործակցության ընթացիկ իրավիճակի և զարգացման վերաբերյալ:

Աշխատանքներ են իրականացվել ՀՀ-ում կազմակերպվող ցուցահանդեսներին, համաժողովներին, կազմակերպություններին պետական աջակցության ապահովման, ինչպես նաև օտարերկրյա գործարար շրջանակների պատվիրակությունների այցելությունների շրջանակներում աշխատանքային հանդիպումների կազմակերպման ուղղությամբ: Համակարգվել են Ճապոնիայի Աիչի նահանգում կայացած «Բնության Իմաստությունը» խորագրով «ԷՔՍՊՈ 2005» համաշխարային ցուցահանդեսին ՀՀ մասնակցության ուղղությամբ տարվող կազմակերպչական աշխատանքները: ԶՀԳ, ՀՀ ԱԱՊ, Տեղեկատվական մարքեթինգային կենտրոնին, ՀՀ արդյունաբերողների և գործարարների միությանը պարբերաբար ներկայացվել է տեղեկատվություն արտերկրում կազմակերպվող գործարար համաժողովների, ցուցահանդեսների և այլ գործարար առաջարկությունների վերաբերյալ:

Քննարկվել և կարծիքներ են ներկայացվել ԱՊՀ շրջանակներում ազատ առևտրի գոտու լիակատար ձևավորմանն ու հետագա զարգացմանն ուղղված միջոցառումների, 2003թ. սեպտեմբերի 19-ի ԱՊՀ պետությունների ղեկավարների Խորհրդի Որոշմամբ հաստատված 2003-2010թթ. տնտեսական ոլորտում ԱՊՀ անդամ-պետությունների փոխգործունեության արդյունավետության զարգացմանն ու բարձրացմանն ուղղված կարևորագույն միջոցառումների իրականացման Ծրագրի, միջպետական և միջկառավարական ծրագրերի իրականացումը մշակելու, ինչպես նաև ԱՊՀ Գործադիր Կոմիտեի 2004թ. սեպտեմբերի 16-ի ԱՊՀ պետությունների ղեկավարների խորհրդի Որոշման կետերի իրականացմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ փաստաթղթերի մասին:

Քննարկվել են ԱՊՀ շրջանակներում ստորագրման նախապատրաստվող 11 Համաձայնագրերի նախագծեր: Սահմանված կարգով աշխատանքներ են տարվել 3 միջազգային պայմանագրերի նախագծերի ներպետական համաձայնեցման և ստորագրման նախապատրաստման ուղղությամբ: Քննարկվել են 8 միջազգային Համաձայնագրերի նախագծեր: Սահմանված կարգով վարվել են աշխատանքներ ուղղված 1 միջազգային Համաձայնագրի վավերացման ապահովմանը:

2.10. ԱՀԿ և ԵՄ հետ համագործակցություն

<u>ԱՀԿ-ի հետ համագործակցություն:</u> ԱՀԿ-ում ՀՀ առևտրատնտեսական շահերը ներկայացնելու, կազմակերպությունում ընթացող բազմաբնույթ գործընթացներում ակտիվ մասնակցություն ունենալու նպատակով ստեղծվել է ԱՀԿ-ում ՀՀ մշտական ներկայացուցչություն, մշակվել է ներկայացուցչության կանոնադրությունը, նշանակվել է ԱՀԿ-ում ՀՀ մշտական ներկայացուցիչ:

ԱՀԿ շրջանակներում ընթացող ազատականացման բանակցությունների շրջանակներում Նախարարության կողմից մշակվել և ՀՀ կառավարության հավանությանն է արժանացել «2005թ. դեկտեմբերի 13-18-ը Հոնգկոնգում կայանալիք ԱՀԿ 6-րդ նախարարական վեհաժողովում ՀՀ կառավարության դիրքորոշման հիմնադրույթները»: Իրականացվել է նշված բանակցություններում քննարկվող հիմնախնդիրների վերաբերյալ ԱՀԿ անդամ երկրների կողմից պարբերաբար ներկայացվող առաջարկությունների և բանաձևերի ուսումնասիրություն: Նախապատրաստվել է ՀՀ պաշտոնական պատվիրակության մասնակցությունը:

ԱՀԿ անդամակցության գործընթացում գտնվող ՀՀ առևտրային գործընկեր մի շարք երկրների հետ ընթացել են երկկողմ բանակցություններ: 2005թ. համապատասխան արձանագրության ստորագրմամբ ավարտվել են բանակցությունները Բելառուսի Հանրապետության հետ:

Մշակվել և ՀՀ կառավարության քննարկման են ներկայացվել ՀՀ առևտրատնտեսական դաշտի բարելավմանն ուղղված իրավական ակտերի նախագծեր:

<u>ԵՄ-ի հետ համագործակցություն:</u> Սահմանված կարգով եվրոպական կողմին է ներկայացվել ԵՀԾ շրջանակներում ՀՀ-ԵՄ Գործողությունների Ծրագրի նախնական տարբերակը:

Նոյեմբերին ԵՀԾ շրջանակներում եվրոպական կողմի հետ սկսվել են բանակցություններ՝ ՀՀ-ԵՄ հարաբերությունների առաջնայնությունները սահմանելու և համապատասխան Գործողությունների Ծրագիրը լրամշակելու ուղղությամբ:

Սկսվել է ԵՄ-ի կողմից ՀՀ-ին շուկայական տնտեսության կարգավիճակ շնորհելու գործընթացը: Մշակվել և եվրոպական կողմին է ներկայացվել ՀՀ տնտեսության վերաբերյալ «Հայաստանի Հանրապետության ոչ շուկայական տնտեսության կարգավիճակի վերանայման հայց» փաստաթուղթը: Ներկայումս այդ գործընթացը գտնվում է ավարտական փուլում:

ԳՀՀ դրույթների իրականացման նպատակով շահագրգիռ նախարարությունների և գերատեսչությունների հետ համատեղ նախարարությունը մասնակցել է ՀՀ օրենսդրությունը ԵՄ օրենսդրությանը մոտարկման Ազգային ծրագրի մշակմանը:

Կազմակերպվել և անցկացվել են ԳՀՀ շրջանակներում ստեղծված ՀՀ-ԵՄ Համագործակցության Կոմիտեի և Առևտրի, տնտեսական և համապատասխան իրավական հարցերով ենթակոմիտեի նիստերը:

<u>ԱՀԿ ծանուցման գործունեություն:</u> Հաշվետու ժամանակաշրջանում ամբողջությամբ կատարվել են ՀՀ ԱՀԿ շրջանակներում 2005թ-ի համար նախատեսված բոլոր հերթական և ըստ անհրաժեշտության ծանուցումները: Համակարգման, տեղեկատվության փոխանակման և քննարկումների ընդգրկուն աշխատանք է տարվել ՀՀ-ում ԱՀԿ հարցման կետերի, ՀՀ տարբեր նախարարությունների և պետական կառավարման այլ մարմինների հետ: Ուսումնասիրվել և ԱՀԿ չափանիշների համաձայն մշակվել են առնչվող նյութերն ու փաստաթղթերը: Արդյունքում ԱՀԿ Քարտուղարությանն են տրամադրվել ԱՀԿ ծանուցումներ 9 համաձայնագրերի, ինչպես նաև ՀՀ գործող մաքսային սակագների և ՀՀ ներմուծված ապրանքների ծավալների առնչությամբ: ԱՀԿ հարցման կետերի հետ համագործակցության միջոցով նախապատրաստվել և ուղարկվել են հարցումների պատասխանները, տրվել են մեկնաբանություններ:

ՀՀ պարտավորությունների ներքո նախապատրաստվել և իրականացվել են «Էներգետիկ խարտիայի» համաձայնագրի շրջանակներում անհրաժեշտ ծանուցումները: Անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրման նպատակով հարցումներ, խորհրդակցություններ և քննարկումներ են իրականացվել ԱՀԿ հարցման կետերի, համապատասխան նախարարությունների և գերատեսչությունների հետ:

Ստեղծվել է ՀՀ-ում ԱՀԿ ծանուցման գործակալության ինտերնետային կայքը (<u>www.arm-wto.am</u>):

2.11. Փոքր և միջին ձեռնարկատիրության (ՓՄՁ) ոլորտ

2005թ. Ոլորտում գործունեությունն ուղղված է եղել Հայաստանում ՓՄՁ զարգացման քաղաքականության, ՓՄՁ ոլորտի զարգացմանն ուղղված ծրագրերի մշակմանը, ինչպես նաև ՓՄՁ ոլորտի պետական աջակցության ուղղությամբ ձեռնարկված համապատասխան միջոցառումների իրականացմանը:

Վերջին 3 տարիների ընթացքում ստեղծվել են շուրջ 25 հազար ՓՄՁ սուբյեկտներ, իսկ միայն 2005թ., ըստ գնահատականների, ստեղծվել են շուրջ 9500 նոր ՓՄՁ սուբյեկտներ՝ ապահովելով ավելի քան 23 հազար նոր աշխատատեղ: Զգալի է ՓՄՁ ոլորտի մասնակցությունը ՀՆԱ ձևավորման գործում. 2005թ. այն կազմել է շուրջ 40%՝

2004թ. 38.6% դիմաց: Արտահանման ծավալում ՓՄՁ սուբյեկտների տեսակարար կշիռը 2005թ., ըստ նախնական տվյալների, կազմել է 16.4%՝ 2004թ. 15.7% դիմաց: Զբաղված բնակչության ընդհանուր թվաքանակում, ըստ նախնական տվյալների, 2005թ. ՓՄՁ սուբյեկտներում աշխատողների տեսակարար կշիռը կազմել է շուրջ 34%, 2004թ. 32.9% դիմաց: 2005 թ. անհատ ձեռնարկատերերի և առևտրային կազմակերպությունների ընդհանուր թվաքանակում ՓՄՁ սուբյեկտները կազմել են ավելի քան 97%, որից 48.3% գրանցվել են ք.Երևանում, իսկ 51.7%՝ ՀՀ այլ մարզերում: Հայաստանում ՓՄՁ զարգացման ինդեքսը (համաձայն նախնական տվյալների) 2005թ. կազմել է 147.8՝ 2004թ.- 117.8, 2003թ.- 82.0 դիմաց:

Իրականացվել է ՓՄՁ պետական աջակցության 2005թ. ծրագիրը, որով նախատեսված ծրագրային միջոցառումների ավելի քան 70 տոկոսն ուղղվել է ՀՀ մարզերում տնտեսական և գործարար ակտիվության բարձրացմանը՝ աջակցություն ցուցաբերելով շուրջ 4500 ՓՄՁ սուբյեկտի:

Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ տարածաշրջանային գործունեության ապահովման նպատակով հիմնադրվել է 4 նոր մասնաճյուղ՝ Արմավիրի (ք. Արմավիր), Արարատի (ք. Արտաշատ), Գեղարքունիքի (ք. Սևան) և Վայոց Ձորի (ք. Վայք) մարզերում, ի լրումն այլ մարզերում արդեն իսկ հիմնադրված 6 մասնաճյուղերի, որով ավարտվել է մարզային մասնաճյուղերի ցանցի ձևավորման գործընթացը, ինչը հնարավորություն կտա ՓՄՁ պետական աջակցությունը ՀՀ մարզերում իրականացնել առավել նպատակային և հասցեական:

Իրականացվել են վարկային երաշխիքների տրամադրման, խորհրդատվական, ուսուցողական, ISO 9000 շարքի որակի կառավարման համակարգի ներդրման, սկսնակ գործարարներին աջակցության և այլ ծրագրեր: Նախապատրաստական աշխատանքներ են տարվել վարկային տոկոսադրույքների սուբսիդավորման ուղղությամբ:

Աշխատանքներ են իրականացվել նաև «Անդրոն-գիտահետազոտական ինստիտուտ-տեխնոպարկի» ինստիտուցիոնալ զարգացման ու ամրապնդման, ինչպես նաև տեխնոպարկում նոր ՓՄՁ սուբյեկտների ներգրավման ուղղությամբ:

Ընդհանուր առմամբ, ՓՄՁ պետական աջակցության 2005 թվականի ծրագրի իրականացման համար ՀՀ պետական բյուջեից հատկացվել է 300 մլն դրամ: Բացի այդ, միջազգային, օտարերկրյա և տեղական կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակներում վերոհիշյալ ծրագրի իրականացման ուղղությամբ ներգրավվել է շուրջ 52 մլն դրամ:

ՀՀ կառավարության կողմից արդեն իսկ հաստատվել է Փոքր և միջին ձեռնարկատիրությանը պետական աջակցության 2006 թվականի ծրագիրը:

2.12. Զբոսաշրջության ոլորտ

Զբոսաշրջային այցելությունների աճը 2001թ. սկսած պահպանվում է տարեկան 25-30%-ի սահմաններում: Հաշվի առնելով զբոսաշրջային այցելությունների աճի տեմպը՝ 2005թ. կտրվածքով ներգնա զբոսաշրջային այցելությունների ցուցանիշը հատել է 300000-ի սահմանագիծը:

2005թ. վերանորոգվել և շահագործման են հանձնվել Երևանում՝ «Գոլդեն Փելես», «Ռեգինե» և «Ինվոյ» հյուրանոցները և Ծաղկաձոր քաղաքում՝ «Զվարթնոց» հանգստյան տունը, «Կեչառիս» հյուրանոցը և «Ճոպանուղի 3»-ը: Արդյունքում 2005թ. ննջատեղերի քանակը ավելացել է մոտ 500-ով:

Վերոհիշյալ ցուցանիշների ապահովման ուղղությամբ իրականացվել են հետևյալ միջոցառումները:

Նախարարության առաջարկությամբ ՀՀ կառավարության կողմից ընդունվել են մի շարք որոշումներ՝ զբոսաշրջության բնագավառում պետական ծրագրեր հաստատելու և զբոսավարների ու ուղեկցորդների լիցենզավորման կարգը բարելավելու մասին:

ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարի հրամանով հաստատվել է «Հայաստանի Հանրապետությունում զբոսավարի և ուղեկցորդի կողմից անվանաքարտ կրելու կարգը»:

ՀՀ արտաքին գործերի նախարարության հետ համատեղ քննարկվել և մշակվել են վիզային ռեժիմի հնարավոր ազատականացման, ինչպես նաև մի շարք երկրների հետ ճկուն վիզային քաղաքականության իրականացման մեխանիզմները:

Սկսվել է զբոսավարի և ուղեկցորդի գործունեության լիցենզավորման գործընթացը, որի շրջանակներում հրավիրվել և անց է կացվել զբոսավարի և ուղեկցորդի լիցենզավորման հանձնաժողովի 22 նիստ, ինչի արդյունքում շնորվել են 77 զբոսավարների և 3 ուղեկցորդների լիցենզիաներ:

Իրականացվել են հյուրանոցային տնտեսության օբյեկտների համապատասխանության ստուգումներ (Երևանում՝ 4, Լոռու մարզում 4 հյուրանոցների ստուգման արդյունքում պարզվել է վերջիններս համապատասխանությունը օրենքի պահանջներին):

Հաշվետու ժամանակաշրջանում Հայաստանը մասնակցել է Միլանի BIT 2005, Բեռլինի ITB 2005, Թբիլիսիի CTF 2005, Տոկիոյի JATA WTF 2005, Լոնդոնի WTM 2006 ցուցահանդեսներին: Մշակվել և տպագրվել են ոլորտին առնչվող գովազդա-տեղեկատվական բազմաթիվ նյութեր: Ճանաչողական նպատակներով կազմակերպվել են Ճապոնիայից և եվրոպական երկրներից ժամանած զբոսաշրջային օպերատորների և լրագրողների մի շարք այցելություններ:

2005թ. ընթացքում կազմակերպվել են ոլորտի 15 մասնագետների վերապատրաստում Եգիպտոսում, Հունաստանում և Կիպրոսում, իսկ Ծաղկաձորի հյուրանոցային տնտեսության օբյեկտների 14 ներկայացուցիչների համար «Արմենիա Մարիոթ» հյուրանոցում կազմակերպվել է երկօրյա ուսուցողական-ճանաչողական դասընթաց:

ՀՀ և Հունաստանի Հանրապետության միջև միջկառավարական հանձնաժողովի երրորդ նիստի փոխըմբռնման հուշագրի շրջանակներում ՀՀ կրթության և գիտության նախարարության հետ համատեղ աշխատանքներ են տարվել զբոսաշրջության բնագավառի միջին մասնագիտական կրթահամալիրի հիմնադրման ուղղությամբ :

Հայաստանի պատվիրակությունը մասնակցել է՝

- Սենագալի Հանրապետության մայրաքաղաք Դակարում Զբոսաշրջության Համաշխարհային Կազմակերպության (ԶՀԿ) Գլխավոր Ասամբլեայի 16-րդ վեհաժողովի աշխատանքներին,
- Թբիլիսիում զբոսաշրջության վիճակագրություն և զբոսաշրջության սատելիտային հաշվի կառուցման գծով կազմակերպված աշխատանքային երկրորդ սեմինարին:

Ծաղկաձորում Համաշխարհային Բանկի հետ համատեղ կազմակերպվել է «Տրանս-Կովկասյան զբոսաշրջության նախաձեռնություն» ծրագրի շրջանակներում Զբոսաշրջության տարածաշրջանային ֆորում:

2.13. Մտավոր սեփականության պահպանության ոլորտ

ՀՀ մտավոր սեփականության գործակալությունը 2005թ. շարունակել է արդյունաբերական սեփականության օբյեկտների իրավական պահպանության ապահովման հետ կապված՝ գյուտերի, օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշների, ապրանքային նշանների, ապրանքների ծագման տեղանունների հայտերի ընդունման, փորձաքննության անցկացման, պահպանական փաստաթղթերի տրամադրման, ինչպես նաև պաշտոնական տեղեկությունների հրապարակման և իր կանոնադրությամբ նախատեսված այլ աշխատանքների կատարումը:

Ուշադրություն է դարձվել բնագավառը կարգավորող իրավական դաշտի կատարելագործման աշխատանքներին, մասնավորապես բնագավառում միջազգային ընդունված նորմերի կիրառման ապահովման նպատակով մշակվել են «Հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների մասին» ՀՀ նոր օրենքի, ինչպես նաև դրա հետ կապված «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծերը, որոնք ՀՀ կառավարության կողմից ներկայացվել են ՀՀ Ազգային Ժողովի քննարկմանը:

Ոլորտը կարգավորող մի շարք հիմնարար օրենքների ուժի մեջ մտնելու կապակցությամբ ընդունվել են ՀՀ առևտրի եւ տնտեսական զարգացման նախարարի մոտ երկու տասնյակ հրամաններ:

2005թ. գործակալությունում ստեղծվել է էլեկտրոնային գրադարան, ինչը նպատակ ունի օժանդակելու ՓՄՁ սուբյեկտներին, ինչպես նաև առանձին գյուտարարների՝ որոշակի բնագավառներում տեխնիկայի մակարդակը որոշելու հարցում: Գրադարանից օգտվողները հնարավորություն ստացան շատ կարճ ժամանակում ի հայտ բերելու բոլոր այն տեխնիկական լուծումները, որոնք վերաբերում են տվյալ բնագավառի տեխնիկայի մակարդակին և որոնք համապատասխան հիմք կարող են ծառայել նոր մշակումների, ինչպես նաև նոր մտահղացումների իրագործման համար:

<u>Գյուտեր և օգտակար մոդելներ</u> 2005թ. ՀՀ մտավոր սեփականության գործակալություն է ներկայացվել 208 գյուտի եւ 23 օգտակար մոդելի հայտ, որոնցից 226-ը՝ ազգային հայտատուներից, 5-ը՝ օտարերկրյա հայտատուներից: 2005թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ստացված գյուտերի և օգտակար մոդելների հայտերի ընդհանուր քանակը 1992 թվականից սկսած կազմել է 2355:

Արտոնագրային համագործակցության մասին պայմանագրի (PCT) ընթացակարգով Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության միջազգային բյուրո (Ժնև) առաքվել է գյուտի 3 միջազգային հայտ: Այսպիսով, Հայաստանի Հանրապետությունից առաքված PCT հայտերի ընդհանուր քանակը կազմում է 39: Եվրասիական արտոնագրային կոնվենցիայի ընթացակարգով ազգային հայտատուների կողմից 2005թ. ներկայացվել է գյուտի 1 հայտ: Եվրասիական արտոնագրային գերատեսչություն (Մոսկվա) առաքված հայտերի ընդհանուր քանակը կազմում է 9: 186 հայտերով անցկացվել է նախնական փորձաքննություն և որոշում է կայացվել հայտերի պաշտոնական հրապարակման մասին: Գործավարությունն ավարտվել է 180 հայտերով: 2005թ. տրվել է գյուտի 126 արտոնագիր և օգտակար մոդելի 20 արտոնագիր:

<u>Ապրանքային նշաններ, ապրանքի ծագման տեղանուններ և արդյունաբերական նմուշներ:</u> 2005 թ. ազգային ընթացակարգով ստացվել են ապրանքային նշանի գրանցման 1449 հայտ (որոնցից 1090-ը՝ ազգային հայտատուներից) և ապրանքի ծագման տեղանվան օգտագործման իրավունքի 6 հայտ: Ապրանքային նշանների 1400 հայտով կատարվել է նախնական փորձաքննություն: Հետ են կանչվել 51 հայտեր, իսկ 89 հայտերով կայացվել են ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին որոշումներ: Գրանցվել են 1271 ապրանքային և սպասարկման նշաններ (1039-ը՝ ազգային հայտատուների անունով):

Ապրանքի ծագման տեղանվան 6 հայտով կատարվել է նախնական փորձաքննություն և կայացվել է տեղանվան օգտագործման իրավունք տալու մասին 3 որոշում: Նշանների միջազգային գրանցման մասին Մադրիդյան համաձայնագրի և դրա

արձանագրության շրջանակներում ՀՀ նշմամբ ստացվել է ապրանքային նշանների միջազգային գրանցման մասին 1627 ծանուցում: Նախնական մերժման մասին կայացվել է 384 որոշում, իսկ վերջնական մերժման մասին՝ 224: 23 միջազգային գրանցումներով մերժվել է ապրանքային նշանների զիջումը: Տրվել է ապրանքային նշանների գրանցման 1271 վկայագիր:

Ստացվել է 20 արդյունաբերական նմուշի հայտ (որոնցից 10-ը՝ ազգային հայտատուներից): Դրանցից 14-ով որոշում է կայացվել արտոնագիր տալու մասին: Տրվել է արդյունաբերական նմուշի 44 արտոնագիր:

Ֆիրմային անվանումներ: 2005 թ. ՀՀ մտավոր սեփականության գործակալություն է ներկայացվել ֆիրմային անվանման գրանցման 3058 հայտ: Գրանցվել է ընդամենը 2917 անվանում, մերժվել է 141-ը: "Հայ", "Հայաստան", "Հայկական" բառերի և դրանց թարգմանությունների օգտագործման համար տրվել է 19 թույլտվություն:

Տեղեկատվական տեխնոլոգիաներ: 2005 թ. լազերային սկավառակներով հրապարակվել են «Արդյունաբերական սեփականություն» պաշտոնական տեղեկագրի 4 համար: Իրականացվել է 126 գյուտի և 20 օգտակար մոդելի գծագրերի ներմուծումը, առաջին էջերի, լրիվ նկարագրությունների և հավակնության սահմանումների էլեկտրոնային ձևի, ինչպես նաև 44 արդյունաբերական նմուշի նկարագրության պատրաստումը և հրապարակումը՝ արտոնագրատերերին, գրադարաններին փոխանցելու, գործակալության համակարգչային ցանցում ներքին օգտագործման համար, ինտերնետային կայքում, ինչպես նաեւ «CISPATENT» սկավառակի վրա տեղադրելու համար՝ համընդհանուր օգտագործման նպատակով: Հրատարակվել է «Գյուտերի հայտեր» պաշտոնական տեղեկագրի 12 համար: Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպություն (ՄՄՀԿ) ներկայացնելու համար պատրաստվել են 2004թ. տեխնիկական և վիճակագրական հաշվետվությունները գյուտերի և օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշների, ապրանքային եւ սպասարկման նշանների վերաբերյալ: Արտոնագրային տեղեկատվության փոխանակման շրջանակներում, ՀՀ մտավոր սեփականության գործակալությունը պաշտոնական տեղեկագրերն ուղարկել է 21 օտարերկրյա պետությունների արտոնագրային գերատեսչություններ, ինչպես նաև՝ Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպություն (ՄՄՀԿ), Եվրոպական արտոնագրային գերատեսչություն (ԵԱԳ) և Եվրասիական արտոնագրային գերատեսչություն (ԵԱԱԳ): Թողարկվել են «CISPATENT» անվանմամբ 12 կոմպակտ սկավառակներ, որոնցից 4 համարներում զետեղված են ՀՀ-ում արտոնագիր ստացած 126 գյուտի եւ 20 օգտակար մոդելի մասին մատենագիտական տվյալներ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Շարունակվել են Եվրասիական արտոնագրային գերատեսչության հետ համատեղ ստեղծված տեղեկատվական որոնման համակարգի փորձարկումները:

Տվյալ համակարգը թույլ է տալիս բոլոր շահագրգիռ անձանց ազատ մուտք ունենալ ՀՀ-ում գրանցված գյուտերի եւ օգտակար մոդելների հիմնապաշարներ: Գործակալության տեղեկատվական հիմնապաշարը համալրվել է լազերային սկավառակների վրա զետեղված ՌԴ արտոնագրային տեղեկատվությամբ՝ սկսած 1924-ից: Շարունակվել է ESPACE World գյուտերի որոնման համակարգերի ստացումը ՄՄՀԿ-ից, BREF և COSMOS գյուտերի որոնման համակարգերի ստացումը՝ Ֆրանսիայից: 2005 թվականից «ROMARIN» ապրանքային նշանների որոնման համակարգը գործակալությանը հասանելի է դարձել ՄՄՀԿ-ի կողմից տրամադրված ինտերնետային էջից:

Շարունակվել են գործակալության ավտոմատացման եւ տեխնիկական վերազինման աշխատանքները: Արդյունքում ստեղծվել են հիմնապաշարների ծրագրերի նոր ենթավարկածներ: Իրականացվել է HP surestore dat autoloader արխիվացման սարքի և Veritas Backup Exec ծրագրի տեղադրում և կարգաբերում, տվյալների արխիվացման ռազմավարության մշակում:

Լիցենզային և զիջման պայմանագրերի գրանցում: 2005թ. ընթացքում քննարկվել և գրանցվել են 103 պայմանագրեր, որոնցից 79-ը՝ ապրանքային նշանների զիջման մասին, 19-ը՝ ապրանքային նշանների օգտագործման լիցենզիա տալու մասին, 4-ը՝ գյուտի արտոնագրի զիջման մասին, 1-ը՝ գյուտի արտոնագրի օգտագործման բացառիկ լիցենզիա տալու մասին:

2005թ. Գործակալության կողմից իրականացվող գործողությունների համար պետական բյուջե մուտքագրվել է 358691,0 հազ. դրամ, այդ թվում՝ գյուտերի և օգտակար մոդելների հայտերի հետ կապված՝ 4580, ապրանքային նշանների և արդ. նմուշների հայտերի հետ կապված՝ 162740, Ֆիրմային անվանումների գրանցումների հետ կապված՝ 25861, լիցենզային և զիջման պայմանագրերի գրանցման հետ կապված՝16034, պետական գրանցամատյանների վարման հետ կապված՝ 140068, բողոքների քննարկման հետ կապված՝ 9114, այլ գործողությունների հետ կապված՝ 294 հազար դրամ:

2.14. Ստանդարտացման, չափագիտության և համապատասխանության հավաստման գործունեություն

Ստանդարտացման, չափագիտության և համապատասխանության հավաստման բնագավառում Նախարարության գործունեությունը 2005 թվականին ուղղվել է արտաքին առևտրում տեխնիկական խոչընդոտների վերացմանը նպաստմանը, արտադրանքի, աշխատանքների և ծառայությունների անվտանգության ապահովման հարցերում սպառողների իրավունքների և պետության շահերի պաշտպանության ապահովմանը,

արտադրանքի, աշխատանքների և ծառայությունների որակի բարձրացման ապահովմանը, չափումների միասնականության ապահովմանը:

Ստանդարտացման բնագավառ: 2005թ. ընթացքում հայրենական արտադրանքի և ծառայությունների որակի և մրցունակության բարձրացման նպատակով ընդունվել և պետական գրանցում են ստացել 350-ից ավելի ազգային ստանդարտներ, այդ թվում՝

- մշակվել և ընդունվել են 49 ՀՀ ստանդարտներ, որոնք ամբողջովին ներդաշնակեցված են գործող միջազգային ստանդարտներին (ISO, EN),
- գործողության մեջ են դրվել 250-ից ավելի միջպետական ստանդարտներ, որոնք նույնպես ներդաշնակեցված են միջազգային ստանդարտներին,
- ուղղակի գործողության մեջ են դրվել 44 միջազգային ստանդարտներ,
- ընդունվել և գործողության մեջ են դրվել 2 դասակարգիչներ՝ «Արտադրանքի դասակարգում ըստ գործունեության տեսակների» և «Հիվանդությունների»:

Նշված աշխատանքներն ուղեկցվել են տեղեկատվության ապահովմամբ, մասնավորապես հրապարակվել են 4 ստանդարտների տեղեկատուներ և 1 կատալոգ:

Նախարարության կողմից մշակվել և ՀՀ կառավարության կողմից ընդունվել են արտադրանքի և ծառայությունների անվտանգության պահանջները սահմանող 10 տեխնիկական կանոնակարգեր՝ մակերևութաակտիվ միջոցներ պարունակող լվացող միջոցների, ցածր լարման էլեկտրասարքավորումների, ծխախոտի, վերգետնյա տրանսպորտի, հակասառիչների, կշռածրարման, սննդամթերքի, զենքի, վերելակների, մեքենաների համար:

Կատարվել է 2005 թվականին նախարարությունների և գերատեսչությունների կողմից գնման ենթակա ապրանքների, ծառայությունների և աշխատանքների ամփոփ անվանացանկերի կոդավորումը, համակարգումը (ավելի քան 70 ցանկ) և ներկայացվել ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն:

Չափագիտության բնագավառ: 2005 թվականին չափումների միասնականության ապահովման նպատակով իրականացվել է 400 չափման միջոցի տեսակի հաստատում, չափման միջոցների 395 պետական փորձարկում, տրվել է 3 չափման միջոցի արտադրության և նորոգման լիցենզիա: Ստուգաչափման են ենթարկվել օրենսդրորեն կանոնակարգվող ոլորտներում շահագործման մեջ գտնվող, ՀՀ-ում արտադրված, ՀՀ ներմուծված և նորոգված 180 000 միավոր չափման միջոց: Փորձաքննության են ենթարկվել ՌԴ և Ուկրաինայի չափագիտության ազգային մարմինների կողմից փոխճանաչման համար ներկայացված 4 տեսակի չափման միջոցների վերաբերյալ փաստաթղթերը և ընդունվել որոշում այդ չափման միջոցների տեսակները ՀՀ-ում ճանաչելու մասին: Կատարվել են հետազոտական աշխատանքներ թունավոր և

պայթունավտանգ գազերի անալիզատորների ստեղծման ուղղությամբ: Ստեղծվել են վերջիններիս աշխատանքային նմուշները:

Համապատասխանության հավաստման բնագավառ: «Համապատասխանության գնահատման մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովելու նպատակով նախարարությունը կազմակերպել է սեմինարներ բոլոր հավատարմագրված սերտիֆիկացման մարմինների համար, որտեղ ներկայացվել են նոր օրենքի պահանջները և դրանից բխող բոլոր իրավական ակտերի ցանկը, գործողության ոլորտը և իրականացման պայմանները: Հավատարմագրման ոլորտում ՀՀ կառավարության կողմից ստեղծվել և հաստատվել է հավատարմագրման խորհրդի նոր կազմը: 2005 թվականին ՀՀ-ում հավատարմագրվել են 21 սերտիֆիկացման մարմիններ և 66 փորձարկման լաբորատորիա: Լայնածավալ աշխատանքներ են տարվել Հանրապետությունում փորձարկման բազայի արդիանակացման և ժամանակակից լաբորատորիաների ձեռքբերման ուղղությամբ: Այդ նպատակով պետական բյուջեի միջոցներով ձեռք է բերվել ժամանակակից շարժական նավթամթերքի փորձարկման լաբորատորիա, որը հնարավորություն կընձեռի օպերատիվ վերահսկել իրացվող ավտոմոբիլային բենզինի համապատասխանությունը տեխնիկական կանոնակարգի պահանջներին: Վերջնական փուլում են գտնվում Ստանդարտների ազգային ինստիտուտի և Չափագիտության ազգային ինստիտուտի փորձարկման բազաների վերազինմանն ուղղված աշխատանքները ժամանակակից սարքավորումներով:

2.15. Որակի վերահսկողություն

Հաշվետու ժամանակաշրջանում Տեսչության կողմից ստուգումներ իրականացնելիս առաջնային նշանակություն է տրվել հացի և առաջին անհրաժեշտության այլ սննդամթերքի, ինչպես նաև լայն սպառման ապրանքների որակի վերահսկողությանը: Վերահսկողությունն իրականացվել է նշված արտադրատեսակների արտադրման և իրացման փուլերում համապատասխանաբար արտադրության և առևտրի տնտեսավարող սուբյեկտներում, ինչպես նաև հավատարմագրված փորձարկման լաբորատորիաներում: Առևտրում հայտնաբերված թերությունների հիման վրա ստուգումներ են իրականացվել նաև տվյալ արտադրանք արտադրող տնտեսավարող սուբյեկտներում:

Տեսչության կողմից տեխնիկական կանոնակարգերի պահանջների և չափագիտական կանոնների ու նորմերի պահպանման պետական վերահսկողություն է իրականացվել 2453 տնտեսավարող սուբյեկտներում (2004թ.՝ 2249), 374-ում հայտնաբերվել են 481 խախտումներ, այդ թվում՝ տեխնիկական կանոնակարգերի պահանջների 419 և չափագիտական կանոնների ու նորմերի 44 խախտումներ, 18

տնտեսավարող սուբյեկտների ղեկավարներ խոչընդոտել են ստուգումների իրականացմանը: Պետական վերահսկողության արդյունքների հիման վրա 197 տնտեսավարող սուբյեկտներին տրվել են կարգադրագրեր տեխնիկական կանոնակարգերի պահանջներին չհամապատասխանող արտադրանքի իրացումը կասեցնելու մասին, իսկ 44 տնտեսավարող սուբյեկտներին տրվել են կարգադրագրեր չստուգաչափված չափման միջոցների շահագործումը արգելելու մասին: Խախտումներ թույլ տված 376 պատասխանատու անձանց նկատմամբ կիրառվել են վարչական տուգանքներ 23.2 մլն դրամի չափով: Միաժամանակ 69 տնտեսավարող սուբյեկտներում իրականացվել են տրված կարգադրագրերի կատարման ստուգումներ, որոնց դրական արդյունքների հիման վրա տրվել են կարգադրագրեր արտադրանքի իրացումը և չափման միջոցների շահագործումը թույլատրելու մասին:

2.16. Տնտեսության մեջ աշխատանքների անվտանգ կազմակերպման հսկողություն

Հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել են ոլորտը կարգավորող իրավական դաշտի ձևավորման աշխատանքները: «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո ՀՀ կառավարության քննարկմանն են ներկայացվել դրանից բխող և կիրարկման ապահովմանն ուղղված որոշումներ: Մասնավորապես.

- ընդունվել է տեխնիկական անվտանգության ապահովման բնագավառում «Լիազոր մարմին ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշումը, որով Նախարարությունը ճանաչվել է «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված գործառույթներն իրականացնող լիազոր մարմին,
- «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու և նրա կանոնադրությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշմամբ ստեղծվող ՊՈԱԿ-ի գործունեությունը նպատակաուղղվելու է արտադրական վտանգավոր օբյեկտում տեխնիկական անվտանգության փորձաքննության իրականացմանը, արտադրական վտանգավոր օբյեկտների գրանցմանը և ռեեստրի վարմանը, տեխնիկական անվտանգության պահանջներ սահմանող տեխնիկական կանոնակարգերի, տեխնիկական անվտանգության բնագավառում նոր գիտական ուղղությունների, գիտափորձերի մշակմանը:

Մշակվել և շահագրգիռ գերատեսչությունների քննարկմանն է ներկայացվել «Տեխնիկական անվտանգության փորձաքննություն իրականացնող անձանց հավատարմագրման և հաշվառման կարգը սահմանելու մասին» և «Վնասակար նյութերի

սահմանաքանակները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումների նախագծերը: Առաջինով սահմանվում են տեխնիկական անվտանգության փորձաքննություն իրականացնող անձանց ներկայացվող պահանջները, հավատարմագրման և հաշվառման կարգը: Երկրորդով հաստատվում են վնասակար նյութերի այն սահմանաքանակները, որոնց գերազանցող չափերով արտադրող, վերամշակող, պահող, փոխադրող, օգտագործող կամ ստացող օբյեկտները կդիտվեն արտադրական վտանգավոր օբյեկտներ, որոնք ենթակա են տեխնիկական անվտանգության փորձաքննության:

«Հայլեռտեխհսկողություն» տեսչությունը 2005 թվականի ընթացքում վերահսկողական կանխարգելիչ գործունեություն է իրականացրել հանրապետության տնտեսության տարբեր ճյուղերում հսկողության ենթակա կազմակերպություններում և օբյեկտներում տեխնիկական անվտանգության ապահովման և աշխատանքների անվտանգ կատարման ուղղությամբ: Հաշվետու ժամանակաշրջանում տեսչության հսկողությանը ենթակա են եղել 1911 կազմակերպություններ 15321 օբյեկտներով: Կատարվել են 2586 նպատակային և օպերատիվ տեխնիկական ուսումնասիրություններ և ստուգումներ, որոնց արդյունքում բացահայտվել և արձանագրվել են տեխնիկական անվտանգության ապահովման նորմերի ու կանոնների 3786 խախտումներ և թերություններ: Դրանցից վերացվել են թվով 2988-ը: Մեկ և ավելի օրով դադարեցվել են աշխատանքները 196 օբյեկտներում, թվով 18 պաշտոնատար և պատասխանատու անձանց նկատմամբ կիրառվել է 18200 դրամ ընդհանուր տուգանք, իսկ 12-ն ազատվել կամ իջեցվել են պաշտոնից: Այս ընթացքում իրավապահ մարմիններին ներկայացվել է 6 գործ: Տեսչության աշխատակիցների կողմից ատեստավորվել, գիտելիքների և հրահանգների պահանջների իմացության ստուգումներ են անցել 1410 մանագետներ, որոնցից 82 իրենց մասնագիտական գիտելիքներով և անվտանգության տեխնիկայի կանոնների իմացությամբ չեն համապատասխանել ներկայացվող պահանջներին: Հսկողության տակ գտնվող կազմակերպություններում տեղի են ունեցել արտադրության հետ կապված մահացու ելքով 7 դժբախտ դեպքեր, որոնց ժամանակ զոհվել է 9 մարդ, ծանր ելքով 2 դժբախտ դեպքեր, որոնց ժամանակ տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ են ստացել 2 մարդ:

2.17. Ընդերքօգտագործման ոլորտ

Գործակալության կողմից հանքարդյունահանման լիցենզիա ստանալու համար ներկայացրած 86 դիմումներից բավարարվել են 72-ը, մերժվել են 4-ը , ընթացքի մեջ են 10-ը: Սահմանված ժամկետում լիցենզային պայմանագիր չկնքելու պատճառով, չեղյալ են ճանաչվել 21 հանքարդյունահանման լիցենզիաներ: Հանքային իրավունքից հրաժարվելու

նպատակով ստացված 11 դիմումներից 10 տրվել է դրական լուծում, 1 ընթացքի մեջ է: Հանքավայրերի շահագործման նախագծերի տեխնիկական և տեխնոլոգիական փորձաքննություն կատարելու նպատակով 55 ներկայացրած դիմումներից, փորձաքննության են ենթարկվել և դրական եզրակացություն են ստացել 42-ը, 7 նախագծեր գտնվում են փորձաքննության փուլում, 2-ը ուղարկվել է լրամշակման, 4 նախագծի փորձաքննությունը դադարեցվել է՝ լիցենզիաները չեղյալ ճանաչվելու պատճառով: Լիցենզային պայմանագիր կնքելու նպատակով ներկայացրած 269 դիմումների համաձայն կազմվել և նախարարի վավերացմանն են ներկայացվել 235 լիցեզային պայմանագրերի նախագծեր, լիցենզիան չեղյալ համարվելու պատճառով մերժվել է 1 դիմում, 33-ն ընթացքի մեջ են: Լեռնահատկացում կատարելու նպատակով ներկայացրած 43 հայտերի համաձայն կատարվել է 34 լեռնահատկացում, 6 հայտ մերժվել է սահմանված ժամկետում թերությունները չվերացնելու պատճառով, 3 հայտ ուսումնասիրության ընթացքում է: Հանքային իրավունքի փոխանցման և գրավադրման նպատակով ընդունված 8 դիմումներից 7-ին տրվել է դրական լուծում, 1-ն ընթացքի մեջ է: Հաշվետու ժամանակաշրջանում ընդունվել են բնօգտագործման վճարների 135 հաշվարկ-հաշվետվություններ, դրանք վերլուծվել են, տնտեսվարող սուբյեկտներին տրվել են ցուցումներ՝ բնօգտագործման վճարների հաշվարկները կատարելու համար:

2005թ. ընդունվել են ոլորտը կարգավորող «Հանքարդյունահանման լիցենզիաների տրման մասին» և «Հանքային իրավունքի փոխանցման մասին» կարգերը:

Հավելված 1

Նախարարության համակարգի 2005թ. ֆինանսատնտեսական գործունեության մասին

Նախարարության համակարգի ընկերությունների կողմից արտադրանքի, աշխատանքների, ծառայությունների իրացման ծավալը կազմել է 2428.7 մլն. դրամ՝ նախորդ տարվա 1305.3 մլն. դրամի համեմատ: Նախնական տվյալներով նախարարության համակարգի ընկերությունների շահույթը կազմել է 199.9 մլն. դրամ՝ նախորդ տարվա 98.2 մլն. դրամի համեմատ, վնասը կազմել է 591.4 մլն. դրամ՝ նախորդ տարվա 651.1 մլն դրամի համեմատ: Ընկերությունների կողմից շաՆաբաժինների գծով հաշվարկվել և վճարվել է 7.0 մլն դրամ: Ընկերությունների կողմից բյուջե է փոխանցվել 301.5 մլն դրամ բոլոր հարկերի գծով, նախորդ տարվա 277.9 մլն դրամի համեմատ: Բյուջեի նկատմամբ պարտավորությունների մնացորդն առ 01.01.2005թ. կազմել է 193.0 մլն. դրամ, այդ թվում՝ տույժ-տուգանքերը 83 մլն. դրամ, իսկ 01.01.2006թ.՝ 182.5 մլն. դրամ, այդ թվում՝ տույժ-տուգանքերը 82.8 մլն. դրամ: 2005թ. ընթացքում տեղի է ունեցել նախորդ տարիների հարկային ապառքների մի մասի, ինչպես նաև տարվա ընթացքում հաշվարկված հարկային պարտավորությունների մարում:

01.01.2006թ. դրությամբ բյուջեի նկատմամբ պարտավորությունները, ըստ հարկատեսակների, նախնական հաշվարկներով (մլն դրամ)

Ցուցանիշի անվանումը	01.01.2005թ.	01.01.2006թ.
Ավելացված արժեքի հարկ	64.1	62.5
Շահութահարկ	10.9	4.3
Եկամտահարկ	24.8	23.7
Գույքահարկ	2.1	1.9
Հողի հարկ	7.3	7.1
Տույժեր	83.2	82.8
Բնապահպանման վճարումներ	0.1	0.1
Այլ պարտադիր վճարներ	-	0.1
Ընդամենը	192.5	182.5

2005թ. սոցիալական ապահովագրության գծով ընկերությունների կողմից տարեկան վճարումը կազմել է 254.8 մլն. դրամ, նախորդ տարվա 216.8 մլն. դրամի համեմատ: 2005թ. ընթացքում հաշվարկվել և վճարվել է շուրջ 958.7 մլն. դրամ աշխատավարձ, նախորդ տարվա 888.0 մլն. դրամի համեմատ:

2005թ. իրականացված պետ. բյուջեով նախատեսված ծրագրերի ֆինանսավորումը (հազ. դրամ)

- Նախարարության աշխատակազմի պահպանման ծախսեր 403358.8
- Ռադիոֆիզիկայի ԳՀԻ 54000.0
  այդ թվում՝ «Արև-100» շինարարության 24000.0
- Գիտալրատվական կենտրոն 12496.0
- Գիտատեխնիկական գրադարան 83410.4
- Հայաստանում փոքր և միջին ձեռնարկատիրական պետական աջակցության ծրագիր 300000.0
- ՀՀ զբոսաշրջիկության զարգացման պետական ծրագիր 20000.0
- «Ռադիոակտիվ թափոնների վնասազերծում» ՓԲԸ 17041.0
- ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից 19802.8
- Դուբնայի միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտին ՀՀ անդամակցության վճարներ 31297.3
- «Էքսպո-2005թ.» համաշխարհային ցուցահանդեսին ՀՀ մասնակցության գծով ծախսեր 66960.0
- Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲԸ-ի կողմից իրականացվող պատվեր 28662.0
- Չափագիտության ազգային ինստիտուտ ՓԲԸ-ի կողմից իրականացվող պետ. պատվեր 41324.0
- ՀՀ 2005թ. տեխնիկական կանոնակարգերի պահանջների և չափագիտական կանոնների ու նորմերի պահպանման վերահսկողության պետական ծրագիր 82747.8
- Գիտության՝ կիրառական հետազոտությունների իրականացման ծրագրի պետ. պատվեր 150146.5

Հավելված 2

Նախարարության փաստաթղթաշրջանառությունը

ՀՀ կառավարության 2005թ. գործունեության ծրագրով նախատեսված

- միջոցառումները նախարարության կողմից կատարվել են սահմանված ժամկետներում: 248-րդ կետով նախատեսված միջոցառման կատարման անհնարինությունը պայմանավորվել է ՀՀ կայուն տնտեսական զարգացման ռազմավարության՝ ՀՀ կառավարության կողմից դեռևս ընդունված չլինելու հանգամանքով:
- գերակա խնդիրների լուծման միջոցառումների իրականացման ընթացքի մասին սահմանված ժամկետներում զեկուցվել է ՀՀ կառավարություն:

2005 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 30-ը ներառյալ նախարարության քարտուղարությունում հաշվառման են վերցվել 7592 պաշտոնական գրություններ, 166 առաջարկություններ, քաղաքացիների դիմում-բողոքներ (որից 16 առաջարկություններ, 135 դիմումներ և 15 բողոքներ), հաշվառվել է նախարարի 254 հրաման: Մտից 7592 գրություններից 125-ը ստացվել են ՀՀ Նախագահի աշխատակազմից, (որից 38-ը վերցվել են հսկողության) 11-ը՝ ՀՀ Ազգային Ժողովի աշխատակազմից (4-ը վերցվել են հսկողության), 11-ը՝ ՀՀ սահմանադրական դատարանի աշխատակազմից (որից 6-ը վերցվել են հսկողության), 1196-ը՝ ՀՀ կառավարության աշխատակազմից, որոնցից 340-ը ՀՀ կառավարության որոշումներ են (որից 117-ը վերցվել են հսկողության), 136-ը ՀՀ վարչապետի որոշումներ (որից 15-ը վերցվել են հսկողության), 720-ը ՀՀ կառավարության նիստերի արձանագրությունների քաղվածքներ, հանձնարարականներ (որից 400-ը վերցվել են հսկողության), 6247-ը ՀՀ նախարարությունների աշխատակազմերից և այլ գրություններ:

2005 թվականին նախարարությունից առաքվել են 3044 ելից գրություն, որից 1815-ը՝ նախարարի, 1229-ը՝ տեղակալների ստորագրությամբ:

Հավելված 3

Ց Ա Ն Կ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

Միջոցառման անվանումը	Նպատակը	Կատարողը	Ժամկետը	Ֆին.-ը
1. ՀՀ կառավարության 2002 թվականի հուլիսի 11-ի N 1229-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	ՀՀ կառավարության 10.04.03թ. N 385-Ն որոշմամբ սահմանազատված ընդերքի օգտագործման և պահպանության բնագավառում լիազորված պետական մարմինների իրավասությունների կրկնության և առանձին գործառույթների անտեսման բացառում	ՀՀ առևտրի և տնտեսա-կան զարգաց-ման նախարա-րություն	2006 թ. փետրվարի 3-րդ տասնօրյակ	
2. ՀՀ կառավարության 10.04.2003թ. N385-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	Ընդերքի օգտագործման և պահպանության բնագավառում լիազորված պետական մարմինների իրավասությունների հստակեցում և տարանջատում		2006 թ. մարտի 1-ին տասնօրյակ	
3. ՀՀ կառավարության 06.11.2003թ. N1445-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	Լեռնահատկացման կարգի հստակեցում և պարզեցում		2006 թ. մարտի 2-րդ տասնօրյակ	
4. ՀՀ կառավարության 31.07.03թ. N 959-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	Ընդերքի օգտագործման և պահպանության բնագավառում լիազորված պետական մարմինների իրավասությունների հստակեցում և տարանջատում		2006 թ. ապրիլի 3-րդ տասնօրյակ	
5.Հանքարդյունաբերության զարգացման ռազմավարության հեռանկարային ծրագիրը ՀՀ կառավարություն ներկայացնելը	Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման հիմնական ուղղությունների և գերակայությունների ամրագրում		2006 թ. մայիսի 1-ին տասնօրյակ	
6.«Չափումների միասնականության ապահովման աշխատանքների գծով 2006 թվականի պետական պատվերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	ՀՀ տարածքում չափումների միասնականության ապահովում՝ համաձայն «Չափումների միասնականության ապահովման մասին» ՀՀ օրենքի 11-րդ և 29-րդ հոդվածների		2006 թ. մայիսի 1-ին տասնօրյակ	
7.«Հայաստանի Հանրապետության տեխնիկական կանոնակարգերի մշակման 2006 թվականի ծրագիրն ու Հայաստանի Հանրապետության ստանդարտացման 2006 թվականի ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	«Ստանդարտացման մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի բ) կետի պահանջների կատարում, Հայաստանի Հանրապետությունում ստանդարտացման բնագավառի օրենսդրության բարելավում և Առևտրի համաշխարհային կազմակերպության պահանջների կատարում		2006 թվականի մայիսի 2-րդ տասնօրյակ	

8.««Ընդերքը օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության և արդյունահանման համար տրամադրելու (կոնցեսիայի) մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	Օրենքի պահանջների հստակեցում , ՀՀ ընդերքի մասին, ՀՀ հողային,ՀՀ քաղաքացիական օրենսգրքերի պահանջներին համապատասխանեցում		2006 թվականի հունիսի 1-ին տասնօրյակ	
9.««Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	Արդյունաբերական սեփականության իրավական դաշտի կատարելագործում		2006 թ. հունիսի 3-րդ տասնօրյակ	
10. ՀՀ կառավարության 17.10.20012թ. N 986 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	Ընդերքի օգտագործման և պահպանության բնագավառում լիազորված պետական մարմինների իրավասությունների սահմանազատում		2006 թ. հուլիսի 1-ին տասնօրյակ	
11.«ՀՀ կառավարության 30.12.1998թ. N 864 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	Ընդերքի օգտագործման և պահպանության բնագավառում լիազորված պետական մարմինների իրավասությունների սահմանազատում		2006 թ. հուլիսի 1-ին տասնօրյակ	
12.««Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	Օրենքի պահանջների հստակեցում, վճարների հաշվարկման և վճարման գործընթացում թյուրիմացությունների բացառում		2006 թ. հուլիսի 1-ին տասնօրյակ	
13.«Արտադրանքի բաժանման հիմունքներով տրամադրվող ընդերքի տեղամասերի ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 22-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջների կատարում		սեպտեմբերի 2-րդ տասնօրյակ	
14.««Ընդերքն օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության և շահագործման համար տրամադրելու (կոնցեսիայի) մասին» ՀՀ օրենքի պահանջների, հանքարդյունահանման լիցենզային պայմանների և համապատասխան պայմանագրային պարտավորությունների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	«Ընդերքն օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության և շահագործման համար տրամադրելու (կոնցեսիայի) մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին,2-րդ և 11-րդ կետերի պահանջների կատարում		2006 թ. հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ	
15. «Փոքր և միջին ձեռնարկատիրությանը պետական աջակցության 2007թ. ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	«Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի պահանջների կատարում		նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	ՀՀ պետ բյուջե
16.«Ընդերքօգտագործման նախագծային փաստաթղթերի պետական (տեխնիկական և տեխնոլոգիական) փորձաքննության իրականացման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	Հանքարդյունահնման աշխատանքային նախագծերի փորձաքննության գործընթացի կանոնակարգում		2006 թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	